

Տնտեսութեան Խթանման Գոնկրեսի Ծրագիրը

Աշխարհի շատ երկիրներ կը դիմեն արտակարգ միջոցներու՝ տնտեսական փլուզման առաջը րառնելու նպատակով:

Միացեալ Նահանգներու մէջ Մարտ ամսուայ առաջին երեք շաբաթներուն միայն, 3,5 միլիոն գործաւորներ ու պաշտօնեաներ դիմում ներկայացուցած են աշխատանք կորսնցնելու պատճառաւ նպաստ ստանալու համար: Այս օրերուն Ամերիկեան Գոնկրեսի երկու պալատներէն ներս արագացուած եղանակով կը մշակուի օրինագիծ, որ կը նախատեսէ պատմութեան ամենէն մեծ տնտեսական խթանման ծրագիրը, որու ընդհանուր գումարը կը հասնի երկու դրիլիոն Տոլարի: Պատկերացում մը կազմելու համար ըսենք որ, մէկ դրիլիոնը հաւասար է միլիոն անգամ միլիոն Տոլարի:

Այս օրինագիծին մէջ նկատի կ'առնուին նիւթական օժանդակութիւն տրամադրել ամենէն աւելի տուժած տնտեսութիւններուն՝ օգնականացին, զբօսանաւային եւ հիւրանոցային ընկերութիւններուն, ճաշարաններուն եւ այլ խիստ տուժած տնտեսավարողներուն պայմանաւ, որ անոնք շարունակեն վճարել իրենց պաշտօնեաներուն:

Գոնկրեսի օրինագիծը կը նախատեսէ նաեւ 1200 տոլար ուղարկել բոլոր այն ամերիկացիներուն, որոնց տարեկան եկամուտը մինչեւ 75 հազար տոլար է: 75-99 հազար տոլար եկամուտ ունեցողները կը ստանան աւելի նուազ գումար: Ընտանիքները պիտի ստանան 2400 տոլար, իսկ իւրաքանչիւր երեխայի համար յաւելեալ՝ 500 տոլար: 99 հազար տոլարէն աւելի եկամուտ ունեցողներուն բաժին պիտի չհասնի այնպատեղէն: Առաջին գումարները ժողովուրդին պիտի տրուին Ապրիլի սկիզբը: Երկրորդ նման գումար պիտի ուղարկուի Մայիս ամսուն:

Օրինագիծը նաեւ կը նախատեսէ գործազրկութեան նպաստները երկարաձգել եւ վճարել ամսականներու 100 տոլարը:

**«Մասիսի»
 Ընթերցողներուն**

Համաճարակի հետ կապուած՝ տուներէն դուրս չգալու որոշումներուն պատճառաւ, «Մասիս» շաբաթաթերթը ժամանակաւոր պիտի դադրի տպագրի լոյս տեսնել:

Թերթը երեքտորոնային փոստով պիտի ուղարկուի մեր մօտ եղող երեք հազարէ աւելի հասցէներուն:

Անոնք, որոնք կը փափաքին թերթը ստանալ PDF տարբերակով, կրնան իրենց հասցէն ուղարկել Massis2@earthlink.net:

Համաճարակի Պատճառաւ Հայաստանի Սէջ Կը Խստացուի Քաղաքացիներու Տեղաշարժը Վարակուածներու Թիւը Կը Բարձրանայ

Երեքշաբթի, Մարտ 24-ին, ժողովուրդին ուղուած խօսքին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց որ, իւրաքանչիւր կեանք անգին է, եւ մենք պէտք է ամէն ինչ ընենք մահուան ելքով դէպք չունենալու համար:

Վարչապետը նշեց, որ ինդիւրը ոչ միայն վարակի տարածում թոյլ չտալն է, այլեւ առաւել խոցելի խումբերը պաշտպանելը եւ առողջապահական համակարգի անտանելի գերբեռնուածութիւնը կանխարգիլելը:

Այս պահուն, ըստ Փաշինեանի, «Քորոնա» ժահր հաստատուած է 249 քաղաքացիի մօտ, որոնց մեծ մասը կը գտնուի Երեւանի «Նորք» վարակաբանական հիւանդանոցին մէջ, միւսները՝ հանրապետութեան այլ բուժօգնականութիւններուն մէջ:

«Նրանցից մի մասը նոյնիսկ ջերմութիւն չունի, ինչը յոյս է ներշնչում, որ շատերը կը բուժուեն նոյնիսկ առանց բժշկական միջամտութեան: Վարակակիր համաքաղաքացիներէից 30-ի մօտ թոքաբորբ կայ, նրանցից 5-ը գտնուած են արտակարգ բուժման բաժանմունքում, եւ նրանցից մէկի՝ 77-ամեայ մեր հայրենակցի վիճակը



Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռատեսիլով խօսք կ'ուղղէ քաղաքացիներուն


ծայրայեղ ծանր է, 4-ի վիճակը բժիշկները ծանր են գնահատում», - ըսաւ Նիկոլ Փաշինեանը:

Ան աւելցուց, որ այս պահուն կայ մեկուսացուած 868 քաղաքացի, 2419 քաղաքացիի համար սահմանուած է ինքնամեկուսացում տուններուն մէջ: Յոյս յայտնած է, որ անոնք ճշգրտօրէն կը պահպանեն այդ կանոնները:

«Քորոնա» ժահրի դէպքեր յայտնաբերուած են Երեւանի, Արմաւիրի, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի, Սիւնիքի, Շիրակի, Լոռիի մարզերուն մէջ, տեղեկացուցած է ան՝ աւելցնելով, որ անոնցմէ մեծ մասի ծագումնաբանութիւնը յայտնի է:

Շար.ը էջ 15

Հայաստանին Կը Նախատեսուի Տրամադրել 16 Միլիոն Տոլար Ամերիկեան Օժանդակութիւն



Վերի աղիւսակը ցոյց կու տայ Հայաստանի համար առաջարկուած եւ իրականացած օժանդակութեան գումարները՝ տարուէ-տարի

Միացեալ Նահանգները 2021 թուականի համար Հայաստանին կը նախատեսէ տրամադրել 16 մլն տոլար օգնութիւն, կը տեղեկացնէ Երեւանի մէջ գործող Ամերիկեան Ուսումնասիրութիւններու Հայկական Կեդրոնը:

Արտաքին օժանդակութեան ծրագրի խողովակով տրամադրուող այս օժանդակութիւնը ամենաձախուղ օգնութիւնն է 2018-

ի յեղափոխութենէն ասդին: Սակայն, վարչակարգին կողմէ առաջարկուող այս գումարը շատ հաւանաբար վերատեսութեան ենթարկուի Գոնկրեսի կողմէ եւ գումարը բարձրանայ՝ ինչպէս անցեալին:

Յայտնենք որ վարչակարգը դադրեցուցած է Արցախին տրամադրող 1,5 միլիոն Տոլարի ականագերծման ծրագրի նպաստը:

Թոքիոյի Ողիմպիական Խաղերը 3 Ետաձգուեցան



Թոքիոյի ողիմպիական ամառնային խաղերը «Քորոնա» ժահրի համաճարակի պատճառով մէկ տարիով պիտի յետաձգուին: Ճափոնի վարչապետ Սինձօ Ապէն լրագրողներուն ըսած է, թէ Միջազգային ողիմպիական կոմիտէի նախագահ Թոմաս Պախի հետ զրոյցի ընթացքին առաջարկած է մէկ տարիով յետաձգել Ողիմպիատան: Ըստ վարչապետին, Թոմաս Պախը 100 տոկոսով համաձայնած է:

«Խաղաղ ժամանակներու համար աննախադէպ այս որոշումը ընդունուած է՝ հաշուի առնելով

Շար.ը էջ 15

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Քաղաքական Կորոնավիրուսը՝ «Վատիկանի Նկուղներից»

Մինչ պետական կառույցները հանրային լայն աջակցություններ պայքարում էին կորոնավիրուսի տարածման դեմ, «վատիկանի նկուղներից» հերթական ուղերձը ստացուեց: Մի.քայլ Մինասեանը, որի անունն այսօր շրջանառում է մի քանի աղմկալարոց քրեական գործերի հետ կապուած, եւ որը, իրենից ոչինչ չհերկայացնելով, աներոջ նախագահութեան տարիներին հասցրել է պաշտօնապէս մուտիմիլիոնատէր դառնալ, հերթական անգամ ծանրագոյն մեղադրանքներ հնչեցրեց Հայաստանի վարչապետի հասցէին ու «ագդարարեց», թէ նա «դատուելու է այս երկրի, երկնքի եւ պատմութեան դատարաններում»: Զուտ մարդկայնօրէն նրան, ի հարկէ, կարելի է հասկանալ: Հայաստանի վերադառնալ չի կարող՝ ամենայն հասկանալով իր ետեւում, իտալիայում վիճակը լուրջ է, աներոջ ապագան մշուշոտ է, հայաստանեան բիզնեսները նախկին եկամուտները չեն բերում, նոյնիսկ «բիրիքով» ձեռք բերած լրատուամիջոցները չեն կարողանում նորմալ աշխատել՝ կապուած ՁԼՄ-ների նկատմամբ կիրառուող սահմանափակումների հետ, եւ այդ ամէնը, հասկանալի է, նեարդայնացնում է նրան: Բայց ձեւացնելը, թէ իբր իրեն միայն մեր պետութեան ու հասարակութեան ապագան է մտահոգում, ճիշդն ասած՝ չափազանցութիւն էր անգամ նեարդային լարուած վիճակի պայմաններում: Ու երեւի իմաստ էլ չէր ունենայ անդրադառնալ նրա նեարդային գրառումներին, եթէ չլինէր մի հանգամանք՝ ըստ էութեան նա «վատիկանի նկուղներից» բարձրաձայնում է այն, ինչն այսօր Հայաստանում գտնուող իր քաղաքական թիմակիցների մտքում է: Եւ այսպէս, ինչ է ասում երբեմնի թիւ մէկ փեսան: «համաշխարհային փորձը յուշում է, որ աղէտների ժամանակ առաւելագոյն արդիւնքի են հասնում լայն կոնսոլիդացիայի ունեցող հասարակութիւնները, որտեղ գոյութիւն ունի վստահութիւն ինստիտուտների եւ պետութեան հանդէպ»: Բացարձակ ճշմարտութիւն է: Իսկ ինչո՞վ է զբաղուած այս արձանագրման հեղինակը: Ճիշդ է, գիշեր-ցերեկ իրեն պատկանող լրատուամիջոցներով ու հենց անձամբ իր յօդուածներով խարխուլում է մեր

հասարակութեան վստահութիւնը ինստիտուտների եւ պետութեան հանդէպ, այսինքն՝ փորձում է խափանել այն լայն կոնսոլիդացիան, որը պիտի օգնէր մեզ առաւելագոյն արդիւնք ապահովել կորոնավիրուսի դէմ պայքարում: Հասկանում էք, մարդն ասում է մի բան եւ անում է ճիշդ հակառակը: Դա մօտաւորապէս նոյնն է, թէ մէկը, օրինակ, նրա սիրած իտալիայում յայտարարի, որ բնակչութեանն անվճար ալկոհէլ է բաժանելու, եւ բաժանի կորոնավիրուսով վարակուած ինչ-որ հեղուկ: Լաւ, իսկ որտեղից է գալիս այս չարացածութիւնը: Կարող էին, չէ, մէկ-երկու ամիս կամ գոնէ մի քանի շաբաթ համբերել ու հասարակութիւնը պառակտելու փորձերը շարունակել կորոնավիրուսի նահանջից յետոյ: Ոչ, ըստ երեւոյթի չէին կարող: Նրանց ամենաշատը կատաղեցրել է հենց այն, որ այս լարուած օրերին հասարակութիւնը լաւ էլ կոնսոլիդացուել է ու հնարաւոր ամէն ինչով աջակցում է իշխանութիւններին: Կորոնավիրուսի դէմ պայքարի համար բաւականին գումար է հանգանակուել, հազարաւոր կամաւորներ են արձագանքել իշխանութիւնների կոչին, միտերային իստութիւններում խուճապ չկայ (թէեւ որոշ լրատուամիջոցներ խուճապ առաջացնելու ուղղութեամբ լուրջ քայլեր էին ձեռնարկում), մարդիկ ամէն ինչով օգնում են իրար, փողոցներում ախտահանման անվճար միջոցներ են բաժանում, անգամ տրանսպորտի համար են կրկնակի-եռակի վճարում՝ հաշուի առնելով ստեղծուած վիճակը... Համաձայնութեամբ՝ նախկինների տեսանկիւնից սա իսկապէս «կատաղելու բան է»: Չէ որ նրանք այլ կերպ էին պատկերացնում ամէն ինչ. «այ հիմա իրավիճակը դուրս կը գայ վերահսկողութիւնից, ժողովուրդը կը հիասթափուի իշխանութիւններից, ու մենք հետ կը գանք»: Հետ չեն գայ: Առաւել եւս՝ կորոնավիրուսի հետ կապուած այս իրավիճակից յետոյ, երբ չզիմացան գայթակղութեանն ու ծանր պահին փորձեցին թիկունքից հարուածել իշխանութիւններին: Չնայած՝ անձամբ Մի.քայլ Մինասեանը հետ գալու շանս գուցէ եւ ունի: Եթէ իտալիայի իշխանութիւնները արտայանձնեն:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Ինչից է Սկսւում Պաշարումը. Վարչապետի Յայտարարութիւնը

Վարչապետ Փաշինեանը Մարտի 22-ին յայտարարել է, որ վերլուծութիւնները ցոյց են տալիս, թէ իրավիճակը կարող է ձգուել աւելի երկար, քան թուում էր: Խօսքը, բնականաբար, կորոնավիրուսով պայմանաւորուած համաշխարհային իրավիճակի մասին է: Փաշինեանը յայտարարել է, որ մենք պէտք է կարողանանք գտնել անվտանգութեան գոտիներ եւ կազմակերպել մեր կեանքը, գործունէութեան բնականոն ընթացքի գալու նպատակադրումով: Անդադար տեմպով գլոբալացուող աշխարհը կարծես թէ մնացել է «վերելակում»: Բանն այն է, որ վերելքը կանգնել է, ակնյայտօրէն, բայց նաեւ վայրէջքի մասին խօսելը խիստ պայմանական է, որովհետեւ առնուազն տեղեկատուական տեսանկիւնից, աշխարհը թերեւս դատապարտուած է գլոբալութեան, եւ այդ հանգամանքը անշրջելի է: Հետեւաբար, ինչքան էլ երկրները մեկուսանան՝ աշխարհի վիճակով պայմանաւորուած, միեւնոյն է, գլոբալացումը պահպանելու է առնուազն մի ռեժիմ, որն իր հերթին, թերեւս, ամենաուժեղ ռեժիմներից մէկն է: Ի վերջոյ, առ այսօր խօսք է գնում հենց այն մասին, թէ ինչն է աւելի խնդրալարոց ներկայիս պահին՝ կորոնավիրուսի պանդեմիան, թէ ինչո՞վ ենք ինֆոդեմիան: Առնուազն բաւականին բարդ է ասել, կողմնորոշուել, թէ ներկայիս համաշխարհային, այսպէս ասած, բրոունյան շարժման կամ տարամիտման ռեժիմն ինչով է իրականում պայմանաւորուած՝ վարակի իրական վտանգով, թէ դրա մասին տեղեկատուութեամբ: Բանն այն է, որ, եթէ գործունենք աւելի շատ ինֆոդեմիայի, քան պանդեմիայի ուժով թելադրուող գործընթացների հետ, ապա ելքերը պէտք է փնտռել նաեւ այդտեղ, ոչ միայն առողջապահական կամ տնտեսական կանխարգելիչ, բուժիչ միջոցառումներում: Այլապէս, եթէ ինֆոդեմիան թելադրում է ինչ-որ ռեժիմ, ապա կարող է շարունակել նաեւ հետագայ գարգացումների թելադրանքը: Ըստ այդմ առաջանում է հարց՝ հնարաւոր է միայն պանդեմիայի դէմ պայքարով գալ անվտանգային որոշակի շրջանակի, եթէ վտանգի շրջանակը իրականում գծուած է ինֆոդեմիայի կանոններով, հետեւաբար, լուծումները պէտք է փնտռել հենց այդ տիրոջութում: Իսկ այստեղ, ի հարկէ, իրավիճակը բաւականին բարդ է, քանի որ դժուար է պատկերացնել, թէ ինչ մեխանիզմներով է հնարաւոր պայքարել համաշխարհային ինֆոդեմիայի դէմ: Համաձայնաբար հնարաւոր է մեկուսացնել առանձին վերցրած երկրում, սակայն հնարաւոր չէ մեկուսացնել տեղեկատուաւարակը: Կայ թերեւս բացառութիւն՝ ամբողջատիրական խիստ կառավարումը: Կան նաեւ այդպիսի որոշակի փորձ ունեցող երկրներ: Բայց այստեղ, ի հարկէ, ինչիւրը փորձը չէ, այլ նաեւ աւանդոյթները, պատմութիւնը, աշխարհագրական եւ աշխարհաքաղաքական իրողութիւնները, ռեսուրսները եւ այլն: Այդ տեսանկիւնից Հայաստանը չունի համարժէք օրինակներ եւ, թերեւս, բարեբախտաբար, այլապէս կարող

էր նաեւ լրջօրէն դիտարկուել ամբողջատիրութեան ռեժիմով տեղեկատուական ճարակի կանխարգելման տարբերակը: Այն կը լինէր բաւականին հեշտ տարբերակ, բայց Հայաստանի համար, թերեւս, ոչ պակաս վտանգաւոր, քան վարակը, կամ, աւելի շուտ, դրանից էլ վտանգաւոր: Ըստ այդմ, Հայաստանին անհրաժեշտ է լուծում այլ տրամաբանութեամբ, որը պէտք է ենթադրի համաշխարհային տեղեկատուաւարակի դէմ ազգային իմունիտետի ձեւաւորում: Այստեղ մոգական է թուում մեղիագրագիտութիւն բառը, սակայն այն աւելի շուտ բարի ցանկութիւն է ըստ էութեան, քան գործնական դեղամիջոց կամ լուծման միջոց: Լուծումը պէտք է փնտռել ազգային, պետական վերնախաւերի ձեւաւորման մէջ, որոնք կը լինեն համազգային օրակարգ կազմելու ունակ, այդ օրակարգով ձեւաւորելով առաջին հերթին այն անվտանգ միջավայրերը, որոնք թոյլ կը տան Հայաստանը պաշտպանել թէ՛ վարակից, թէ՛ նաեւ տեղեկատուական համաճարակից: Վերնախաւեր, որոնք լինելով ազգային, պետական, կ'ունենան նաեւ մտածողութեան համաշխարհային մասշտաբ, դիտարկելով ներքին կեանքի կազմակերպման մոդելները նաեւ «արտահանման» տրամաբանութեան մէջ, այդպիսով, գործնականում Հայաստանից արտահանելով նաեւ տեղեկատուութիւն՝ այստեղ հասարակական կեանքի կազմակերպման քննարկուող մոդելների տեսքով:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Ընտրութիւններ Մե՞կ Փուլով, Թե՞ Երկու

ՎԱՅՐԱՍ ԱԹԱՆԵՍԵԱՆ

Մարտի 21-ն Արցախի նախագահի թեկնածուների ինքնաբացարկի վերջնաժամկէտն էր: Հնարաւորութիւն, որից ոչ ոք չօգտուեց եւ քուէաթերթիկում կ'ունենանք 14 անուն: Մակայն իրական քարոզարշաւ տանում են Արցախի Յարութիւնեանը, Սամուէլ Բաբայան-Մասիս Մայիլեան տանդեմը, Վիտալի Բալասանեանը, Աշոտ Ղուլեանը, Դաւիթ Իշխանեանը, Վահան Բաղասեանը, Դաւիթ Բաբայանը եւ Հայկ Խանումեանը: Միւս թեկնածուների անուններն ընտրողների մեծամասնութեանը նոյնիսկ ծանօթ չեն:

Վերլուծաբանների մեծ մասը գտնում է, որ իրական մրցապայ-

քարը ծաւալում է երեք բեւեռներին՝ նախկին վարչապետ Արայիկ Յարութիւնեանի, ՊԲ նախկին հրամանատար Սամուէլ Բաբայանի եւ ԱԽ նախկին քարտուղար Վիտալի Բալասանեանի միջեւ: Սոցիոլոգիական հարցումներով առաջին տեղում Արայիկ Յարութիւնեանն է, իսկ ո՞վ է երկրորդը՝ կարծիքները կիսում են: Ոմանք նախապատուութիւնը տալիս են Վիտալի Բալասանեանին, ոմանք՝ Սամուէլ Բաբայանի հովանաւորեալ Մասիս Մայիլեանին: Երբեւնում է, քաղտեխնոլոգիաներ են կիրառուում, որ նախագահի ընտրութիւնը մէկ փուլով չաւարտուի:

Քարոզարշաւի վերջին օրե-

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգային ժողովը Ընդունեց Մեկուսացման Պահանջները Խախտելու Համար Պատիժ Սահմանելու Հարցը

Ազգային ժողովի արտահերթ նիստին, երկրորդ ընթերցումով քննարկման դրուեցաւ եւ 117 կողմ ձայնով ընդունուեցաւ «Հայաստանի Հանրապետութեան քրէական օրէնսգրքի մէջ լրացում կատարելու մասին» եւ «Վարչական իրավախախտումներու վերաբերեալ ՀՀ օրէնսգրքի մէջ լրացումներ կատարելու մասին» օրէնքներու նախագիծերու փաթեթը, որ կը վերաբերի արտակարգ դրութեան պայմաններու խտացման:

20 մարտին, փաթեթը քննարկուած եւ առաջին ընթերցումով ընդունուած էր: Քրէական օրէնսգրքի լրացումը կ'առաջարկուի սահմանել, որ արտակարգ իրավիճակի հիմքով արտակարգ դրութեան ժամանակ, մեկուսացման կամ ինքնամեկուսացման պահանջները խախտելը, եւ որ անգործութեամբ չառաջացուցած է մարդոց զանգուածային հիւանդութիւն, կը պատժուի կալանքով մինչեւ 3 ամիս:

Ոստիկանութիւնը Խուճապ Տարածող Էջեր Բացայայտած Է Համացանցի Մէջ

Հայաստանի մէջ «Քորոնա» ժահրի տարածման կանխարգելման նպատակով յայտարարուած արտակարգ դրութեան հետ պայմանաւորուած համացանցի տարբեր ընկերային կայքերու հայկական մասին մէջ, յայտնաբերուած են անհատական որոշ էջեր, որոնց միջոցով կը տարածուի ապատեղեկատուութիւն, բնակչութեան մէջ խուճապ ստեղծելու նպատակով: ՀՀ ոստիկանութեան Քրէական ոստիկանութեան Գլխաւոր վարչութիւն (ԳՈ ԳՎ) Բարձր արհեստագործութեան (Թէքնոլոժի) ոլորտին մէջ կատարուող յանցագործութիւններու դէմ պայքարի բաժնի աշխատակիցներու կողմէ կատարուած ուսումնասիրութիւններով եւ ձեռնարկուած միջոցառումներով պարզուած են, որ այդպիսի տեղեկատուութիւն տարածող անհատական էջերու օգտատէրերը տեղեկ չեն եղած իրենց էջերով կատարուած գրառումներէն: Պարզուած է, որ գրառումները Հայ օգտատէրերու անհատական էջերով կատարուած են Ատրպէյջանական համացանցային մասի IP հասցէներէ:

Կատարուածի վերաբերեալ քաղաքացիներէն ընդունուած է հարցոգում: Կը նախապատրաստուին նիւթերը:

Հայաստանի ՁԼՍ-ները Ստահոգ են Արտակարգ Դրութեան Բերած Սահմանափակումներով

Լրատուամիջոցներու եւ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչները կը յորդորեն կառավարութիւնը, որ վերանայի արտակարգ դրութեան հետ կապուած լրատուամիջոցներու գործունէութեան սահմանափակումները ու դադրեցնէ գրաքննութիւնը: Արդէն իսկ 2 լրատուամիջոցներ՝ «Առաւօտ» ու «Հրապարակը», ստիպուած հեռացուցած կամ վերախմբագրած են իրենց նիւթերը, քանի որ զգուշացուած են, որ հակառակ պարագային կը տուգանուին 500 հազարէն մինչեւ 800 հազար դրամով:



Aravot.am-ի խմբագիր ԱՃՆԱ Իսրայէլեան

Aravot.am-ը նոյնպէս ոստիկանութեան զգուշացումէն յետոյ վերախմբագրած է իր նիւթը, որ կը վերաբերի ոչ թէ Հայաստանի, այլ Ռուսաստանին, «Քորոնա» ժահրի դէպքերը թաքուն պահելու խնդրին: Aravot.am-ի խմբագիր Աննա Իսրայէլեան «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին կ'ընդգծէ, որ համահունչ մեկնաբանութիւն ըրած էր Ֆէյսպուքեան իր էջին վրայ վարչապետ Նիկոլ Փաշինեան, ըսելով, որ որոշ եր-

Կառավարութիւնը Փաթեթներ կը Մշակէ Վարակի Պատճառով Գործազուրկ Դարձած Մարդոց ու Տուժած Ընկերութիւններու Համար

Կառավարութիւնը ընկերային աջակցութեան փաթեթ կը մշակէ այն քաղաքացիներուն համար, որոնք «Քորոնա» ժահրի պատճառով գործազուրկ կը դառնան, այս մասին Ֆէյսպուքեան ուղիղ եթերով 22 մարտի երեկոյեան յայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Ըստ էութեան կը լինի գործող «փարոս» համակարգի ենթածիւղերից մէկը, որ նախատեսուած էր լինի գործազուրկ դարձած քաղաքացիների համար», - նշեց վարչապետը:

Կը պատրաստուի նաեւ փաթեթ, որով կը նախատեսուի արտօնեալ պայմաններով վարկեր տրամադրել այն ընկերութիւններուն, որոնք իրենց աշխատակիցներուն աշխատավարձեր տալու, հարկեր վճարելու, արտադրութիւն կազմակերպելու, ռազմավարական ներդրումներ ընելու համար աջակցութեան կարիք կ'ունենան. - «Նրբութիւնն այն է, որ տնտեսական ճգնաժամի պայմաններում եւ «Քորոնա» ժահրի ճգնաժամի պայմաններում դրամատանային համակարգ կարող է պարզ քան էլ հակուած չլինել վարկային միջոցներ տրամադրել, որովհետեւ դրանք կը համարուեն ռիսկային: Այդ խնդիրը լուծելու համար մենք որոշել ենք, որ կառավարութիւնն ինքը տարբեր նախագծերում 30 տոկոսից մինչեւ 50-60 տոկոս մասնակցութիւն կ'ունենայ այդ ֆինանսաւորման գործընթացին»:

Անկախ «Քորոնա» ժահրի պատճառով աշխարհի մէջ տեղի ունեցող փոփոխութիւններուն, վարչապետը վստահ է, որ գիւղմթերքի պահանջը չնուազիր, ուստի կարելու է գարնանային այս շրջանին գիւղատնտեսներուն աջակցել. - «Որպէսզի մեր գիւղատնտեսական աշխատանքները ոչ միայն ամբողջ ծաւալով իրականացուեն, այլեւ նորանոր ներդրումներ արուեն գիւղատնտեսութեան ոլորտում, եւ նորանոր մարդիկ սկսեն զբաղուել գիւղատնտեսութեամբ»:

Այդ նպատակով կառավարութիւնը կը պատրաստուի գէրոյացնել գիւղատնտեսութեան զարգացման բոլոր ծրագրերով տրամադրուող վարկերու տոկոսները. - «Կաթիլային ոռոգում, խելացի անասնաբուժութիւն, այգիների տնկում, այգիների հիմնում, ջերմոցային տնտեսութիւններ, եւ մենք այս

ճգնաժամի համատեքստում եւս 1-2 ծրագիր կ'աւելացնենք»:

Վարչապետը ընդգծեց, որ «Քորոնա» ժահրի ճգնաժամի պայմաններուն մէջ գիւղատնտեսութիւնը կը դառնայ ամենակարեւոր եւ հետաքրքիր ոլորտներէն մէկը: «Միշտ էլ հետաքրքիր է եղել, բայց նոր պայմաններում գիւղատնտեսութեան կարեւորութիւնը ընդգծուած է մի քանի պատճառներով. առաջինը՝ պարենային անվտանգութեան խնդիրները հիմա առաւել հրատապութիւն եւ կարեւորութիւն են ստանում եւ ոչ միայն Հայաստանի Հանրապետութիւնում, այլեւ ողջ աշխարհում, երկրորդ՝ գիւղատնտեսութիւնը այն ոլորտն է, որտեղ ընկերային հեռավորութիւն պահպանելու առաւել նախընտրելի եւ ազդեցիկ հնարաւորութիւններ կան, երրորդը՝ մենք տեսնում ենք, որ Հայաստանում գիւղատնտեսութեան ոլորտում նոր աշխատատեղեր ձեւաւորելու եւ ինքնազբաղուածութիւն ապահովելու լայն հնարաւորութիւններ կան», - ըսաւ վարչապետը:

Ընդհանուր առմամբ յառաջիկային կառավարութիւնը աւելի քան 300 միլիոն տոլարի աջակցութիւն կը ներարկէ տնտեսութեան մէջ, տարբեր օգնութիւններու ձեւով:

Ելեմուտքի տնտեսութեան նախարար Տիգրան Խաչատրեան «Ազատութեան» յայտնեց, որ կը մտածէին, որ աջակցութեան տրամադրման առաջնահերթութիւնը պիտի որոշուի ըստ տնտեսութեան ոլորտներուն: Եւ նկատի առնելով, որ ներկայիս իրավիճակը կ'առնչուի տնտեսութեան գրեթէ բոլոր ոլորտներուն հետ կառավարութիւնը որոշած է օգնութեան առաջին բաղադրիչը ուղղել կազմակերպութիւններու ֆինանսական դժուարութիւնները յաղթահարելուն:

«Հիմնական առանձնապատկութիւնն այն է, որ ֆինանսական միջոցներ հասանելի կը դառնան այն կազմակերպութիւններուն, որոնք այս ժամանակաւոր ֆինանսական դժուարութիւնները կը յաղթահարեն կառավարութեան աջակցութեամբ», - նշեց Խաչատրեանը:

Ըստ նախարարին եթէ գործերը լաւ հիմնաւորուին, կառավարութիւնը կ'ընէ ամէն ինչ առկայ խնդիրներու լուծելու համար:

Կիրներ չեն ներկայացներ «Քորոնա» ժահրի մասին իրական թիւերը: Սակայն ոստիկանութիւնը այդ հրապարակումը նկատած է, որ կը խախտէ արտակարգ դրութեան որոշ պահանջներ:

«Որքան էլ ինձ պահանջը բացարձակ անհիմն է թուում, որովհետեւ ես չեմ կարծում, որ Ռուսաստանում դէպքեր թաքցնելու վերաբերեալ տեղեկատուութիւնը հայ հանրութեան մօտ խուճապ էր առաջացնելու, սակայն հաշուի առնելով, թէ ինչ նուրբ վիճակի մէջ ենք, քանի որ խօսքը հանրային առողջութեան վերաբերող փաստաթղթի մասին է եւ այլն, այդ պահին հակադրութեան մէջ մտնել ճիշդ չհամարեցինք, եւ կայքում այդ նիւթը խմբագրուեց», - կը նշէ Aravot.am-ի խմբագիր Աննա Իսրայէլեան:

Վերջինս ըսաւ, որ այս համարժէք արձագանք չէ, որ ըստ էութեան լրատուամիջոցներուն կը յորդորեն ձեռնպահ մնալ որեւէ տեղեկատուութեան հրապարակումէ, որ պարեհատան զնահատումով կրնայ խուճապ առաջացնել, եւ որոնք՝ ոչ, այդ ոչ յստակ ձեւակերպումները կամայական մեկնաբանութիւններու տեղի կուտան, ինչն էլ այժմ տեղի է ունենում. - «Լրատուամիջոցներին ստիպելով լռել, թաքցնել փաստերը, ընդ որում ոչ միայն երկրի ներսում կատարուողի վերաբերեալ, այլեւ դրսում կատարուողի վերաբերեալ, դրանցից վարակուածների վիճակը չեմ կարծում, թէ կը լաւանայ»:

ԼՈՒՐԵՐ

Այս Իրավիճակը Կրնայ Տեւել Շատ Աւելի Երկար, Քան Ի Սկզբանէ Կը Ապասուէր. Նիկոլ Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխավորութեամբ Հայաստանի կառավարութեան նիստ

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխավորութեամբ կառավարութեան մէջ տեղի ունեցած է Հայաստանի Հանրապետութեան մէջ «Քորոնա» ժահրի տարածումը կանխարգելող աշխատանքները համակարգող շանձնաժողովի նիստը:

Նիստի սկիզբը վարչապետը նշած է, որ բոլոր վերլուծութիւնները ցոյց կու տան, որ «Քորոնա» ժահրի հետ կապուած այս իրավիճակը կրնայ տեւել շատ աւելի երկար, քան ի սկզբանէ կը սպասուէր կամ կը կանխատեսուէր: «Այդ առումով, մենք պէտք է որոշակի պատկերացումներ ձեւաւորենք, թէ ինչպէս ենք կազմակերպելու կեանքը մեր հանրապետութիւնում: Ընդհանուր տրամաբանութիւնը եւ ռազմավարութիւնը պէտք է լինի հետեւեալը, որ «Քորոնա» ժահրի սահմանափակման պայմաններում մենք պէտք է գտնենք եւ ձեւաւորենք, այսպէս ասած, ազատ եւ անվտանգ տարածքներ, որտեղ կարող ենք համեմատական անվտանգութեան պայմաններում մեր կեանքը կազմակերպել, ի հարկէ, յընթացս նաեւ հետեւելով իրադարձութիւններին: Մի բան ահնայատ է, որ ամբողջ աշխարհում «Քորոնա» ժահրի հետ կապուած տիրում են հսկայական անորոշութիւններ, այսինքն՝ այսօրուայ դրութեամբ չկայ մի երկիր, որը կարող է արձանագրել, որ յստակ հսկողութեան տակ է առել վիճակը եւ

կառավարում է այն: Ամենաանպատեղի տեղեկութիւններ են գալիս: Օրինակ, ես երէկ կարդացի, որ աշխարհի ամենազարգացած երկրներից մէկում, չեմ ուզում անունը նշել, պաշտօնապէս խոստովանել էին, որ, օրինակ, ունեն քննութեան շիճուկի պակաս, չեն կարողանում անհրաժեշտ թուով քաղաքացիների քննութեան ենթարկել եւ այն: Այնպէս որ, մենք այսպիսի պայմաններում ենք աշխատում եւ պէտք է շարունակենք նոյն տրամաբանութեամբ», - ըսած է Նիկոլ Փաշինեան:

Վարչապետը ընդգծած է, որ կառավարութիւնը երկու ուղղութեամբ կ'աշխատի, կը քննարկեն հակաճգնաժամային ու ռազմավարական ծրագրեր, իսկ հրամանատարութեան միջոցով կը կարգաւորեն գործնական հարցերը:

Փոխ վարչապետ, հրամանատար Տիգրան Աւինեան ընդգծած է, որ այժմ «Քորոնա» ժահրի կանխարգելման ուղղութեամբ, իրավիճակը վերահսկողութեան տակ է եւ ողջ ուշադրութիւնը կեդրոնացած է կանխարգելիչ միջոցառումներու վրայ:

Առողջապահութեան նախարար Արսէն Թորոսեանն ալ աւելցուց, որ «Քորոնա» ժահրով վարակուած 194 մարդոց մէջ ծանր եւ ծայրայեղ ծանր հիւանդներ չունինք, եւ բոլորին վիճակը կը գնահատուի բաւարար:

Հայաստան Կ'աջակցի Համաշխարհային Հրադադարի Կոչին. Արտաքին Գործոց Նախարարը Արձագանգած Է Կուօթերեսին

Հայաստանը լիակատար աջակցութիւն կը յայտնէ Միաւորուած ազգերու կազմակերպութեան ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիո Կուլիբերեսի աշխարհի բոլոր անկիւններու համաշխարհային հրադադարի կոչին: Այս մասին «Թուիթըր»-ին վրայ գրառում կատարած է ՀՀ արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեանը:

«Հայաստանը լիակատար աջակցութիւն է յայտնում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անթոնիո Կուլիբերեսի կոչին՝ մինչ ողջ մարդկութիւնը պայքարում է ընդդէմ ընդհանուր թշնամու՝ COVID-19-ի, աշխարհի բոլոր անկիւններում հաստատել համաշխարհային հրադադար», - գրած է Մնացականեան:

Կուլիբերես իր տեսաուղերձով մասնաւորապէս ըսած էր, որ ժամանակն է գինուած բախումները դնել մէկ կողմ եւ միասին կեդրո-



ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիո Կուլիբերես

նանալ յանուն կեանքի իրական պայքարի վրայ՝ Covid-19 համաճարակի դէմ: Ան նկատած էր, որ

ՍԴՀԿ-ի Կոչը Հայաստանի Հասարակութեան

Ելնելով COVID-19 վիրուսի պատճառով Հայաստանում ստեղծուած իրավիճակից՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը ողջունում է իշխանութիւնների կողմից արտակարգ դրութեան սահմանման քայլը: Միաժամանակ նրանց ուշադրութիւնն ենք հրաւիրում հաւանական արհեստական գնաճների վրայ եւ կոչ ենք անում հետեւողական լինել, որպէսզի մի շարք անբարեխիղճ գործարարների պանդեմիայի ընթացքում մեծ կապիտալ կուտակելու անյազ ծարաւը պատճառ չդառնայ մեր ժողովրդի կեանքի բարդացմանն ու դժբախտութիւններին:

Սիրելի ՀՀ բնակիչներ, հետեւէք բացառապէս հաւաստի տեղեկութիւնների եւ մի տրուէք սադրանքների, այս օրերին մեզ որպէս պետութիւն եւ ազգ անհրաժեշտ է համախմբուած կերպով պայքար տանել պանդեմիայի դէմ եւ աջակից լինել իշխանութիւններին՝ անկախ մեր ունեցած գաղափարական տարակարծութիւններից: Նուստ պահուածք է այս օրերին օգնութեան ցուցաբերման փոխարէն քաղաքական դիվիդենտների հետեւից վազքը, ինչն ահնայատրէն առկայ է:

Միաժամանակ կոչ ենք անում ՀՀ բնակիչներին աչալրջութիւն ցուցաբերել եւ պահպանել հիգիենայի կանոնները, հոգատարութիւն ցուցաբերել միմեանց նկատմամբ՝ դրանով գերծ պահելով շրջապատին եւ ձեզ հաւանական վարակումից:

Ձեռք կարող չանդրադառնալ այն անձանց, որոնք ունենալով վարակիչ հիւանդութիւններ՝ թաքցնելով վտանգի տակ են դնում շրջապատին. սա հասարակութեան ներկայացուցչի վատագոյն եւ պախարակելի պահուածք է:

Ողջունում ենք նաեւ մի շարք բանկերի կողմից բնակիչների եւ գործարարների համար վարկային արձակուրդների տրամադրումը: Կրիկին անգամ կոչ ենք անում աչալրջութեան եւ միմեանց նկատմամբ հոգատարութեան:



ՍԴՀԿ Հայաստանի Վարչութիւն

Աշխատանքի Եւ Սոցիալական Հարցերու Նախարարութիւնը Կ'աջակցի Արտակարգ Դրութեան Զեռոյ Գործազուրկ Դարձողներուն

Հայաստանի Հանրապետութեան մէջ նոր տեսակի «Քորոնա» ժահրի տարածումը կանխելու նպատակով հանրապետութեան մէջ յայտարարուած արտակարգ դրութեան պայմաններուն, ՀՀ «աշխատանքի եւ սոցիալական հարցերու» նախարարութիւնը կ'աջակցի այն քաղաքացիներուն, որոնք այս ընթացքին գործազուրկ կը դառնան:

Ըստ «Արմէնփրէս»-ի, այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ ըսած է ՀՀ «աշխատանքի եւ սոցիալական հարցերու» նախարարութեան աշխատանքի եւ զբաղուածութեան վարչութեան պետ Ժորա Սարգսեան:

«Ձեռ կարծում, որ արտակարգ դրութեան այս ժամանակահատուածում շատ կը լինեն անձինք, ովքեր կը համալրեն գործազուրկների շարքերը: Այնուամենայնիւ, մենք մեր ուշադրութեան կեդրոնում կը պահենք այդ ամէնը, կը փորձենք հասկանալ, թէ ինչ



եղաւ աշխատաշուկայում, ինչ վերադասաւորումներ եղան: Արտակարգ դրութիւնից յետոյ գործազուրկ դարձած անձինք կը լինեն մեր ուշադրութեան կեդրոնում, եւ մենք նրանց կ'առաջարկենք Զբաղուածութեան պետական գործակալութեան կողմից պետական պիւտձէի միջոցների հաշուին իրականացուող զբաղուածութեան ծրագրեր եւ միջնորդութիւններ կ'ուղարկենք, կրկին նրանց աշխատանքի տեղափոխելու համար», - նշեց Սարգսեան:

Ժահրը հաշուի չառնէր ցեղային, ազգային կամ այլ պատկանելիութիւն: Ան կը յարձակի բոլորին վրայ անողոքաբար:


«Մինչդեռ աշխարհի մէջ գինուած հակամարտութիւններ կը տիրեն: Աւելի խոցելիները՝ կանայք, երեխաները, հաշմանդամութիւն ունեցող մարդիկ կը վճարեն ամենաբարձր գինը: Անոնք «Քորոնա» ժահրի ամենամեծ վտանգին տակն են: Չմոռնանք, որ պատերազմէն

տուժած երկիրներուն մէջ, առողջապահական համակարգերը փլուզած են: Փախստակները, տեղահանուած մարդիկ կրկնակի խոցելի են: Վերջ տուէք պատերազմին եւ եկէք պայքարինք այն հիւանդութեան դէմ, որ կը փճացնէ մեր աշխարհը: Այդ իսկ պատճառով էս այսօր կոչ կ'ուղղեմ անյապակաս համաշխարհային հրադադար հաստատել աշխարհի բոլոր անկիւնները», - ըսած է Կուլիբերես:

ՄԱՍԻՍ
 ԱՄԵՆԱԿԱՍԱՐԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՀԿԲՄ-Ի 2020-2021 Տարուայ Կրթանպաստներու Ծրագիրը Բաց Է Նոր Դիմումներու Համար

«Քորոնա» ժահրի համաճարակի համաշխարհային այս պայմաններուն տակ, Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը (ՀԿԲՄ) մեծապէս մտահոգուած է աշխարհի տարածքին մեր բոլոր համայնքներու առողջութեամբ եւ կը մնայ յանձնառու իր բարեգործական առաքելութեան, քաջալերելու երիտասարդութիւնը, որպէսզի շարունակէ իր ուսումը՝ հակառակ դիմագրաւած դժուարութիւններուն: Հետեւաբար, ուրախ է յայտնելու որ, սկսած է ընդունիլ ուսանողական կրթանպաստի դիմումնագրերը՝ 2020-2021 դպրոցական տարեշրջանի համար: Նպաստներ պիտի յատկացուին, ընդհանուր 7500 տոլար (իւրաքանչիւրը մինչեւ 1500 տոլար) գումարով, անոնց որոնք կը յաճախեն Միացեալ Նահանգներու տարածքին գործող եւ հաւատարմագրուած համալսարաններ:



անոնց ակադեմական կարողութիւնը եւ համայնքէն ներս ունեցած գործունէութիւնը: Նպաստի արժանացած ուսանողները պատուուեցան ճոխ ընդունելութեան մը ընթացքին եւ առիթը ունեցան ծանօթանալու համայնքի ղեկավարութեան հետ: Այս տարի եւս, ՀԿԲՄ-ի Կրթանպաստի Յանձնախումբը կը ծրագրէ պատուել 2020 տարուայ արժանաւորները: Արդիւնքները պիտի յայտարարուին Օգոստոս 1, 2020-ին, մեր կայքէջի վրայ եւ էլ-նամակով:

Դիմողները պէտք է ունենան հայկական ծագում, ունենան նուազագոյնը 3.3 GPA եւ գործունէա՛յ են հայկական համայնքէն ներս:

Այս պայմանները լրացնող ուսանողները կրնան այցելել <https://aebu.org/our-programs/scholarship/> կայքը՝ յաւելեալ տեղեկութիւններ եւ դիմումնագրեր ստանալու համար: Դիմումնագրերը կրնան ներկայացուիլ մինչեւ Յունիս 30, 2020, առցանց եւ կամ նամակատան միջոցաւ՝ ուղարկելով հետեւեալ հասցէին՝ AEBU Scholarship Committee, 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104: Յաւելեալ տեղեկութիւններու համար կարելի է հեռաձայնել 818-344-7321 թիւին:

ՀԿԲՄ իր տարեկան նպաստները պիտի յատկացնէ մրցակցական հիմունքներով եւ վերանայումէ ետք: Անցեալ տարի, ՀԿԲՄ-ի Կրթանպաստի Յանձնախումբը ընտրած էր վեց տաղանդաւոր համալսարանական ուսանողներ՝ գնահատելով

Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը հիմնուած է 1969-ին խումբ մը նուիրեալներու կողմէ, որոնք հաւատացած են կարիքաւոր ուսանողներուն օգտակար դառնալու առաքելութեան: Մենք կը հաւատանք, որ ուսանողական նպաստները կարելորդ են մեր երիտասարդներու կրթութեան կերտելու համար աւելի փայլուն ապագայ մը: Մեր ծրագիրներուն օժանդակելու համար կը խնդրենք այցելել <https://aebu.org/donate/> կայքէջը:

ՀԿԲՄ Քալիֆորնիոյ մէջ հաստատուած բարեսիրական կազմակերպութիւն է եւ ունի ոչ հասութաբեր section 501 (c) (3) Internal Revenue Code, Tax ID # 95-3798531 կարգավիճակ:

«Աւրորա» Մարդասիրական Նախաձեռնութիւնը Հայաստանի Հիւանդանոցներուն Կը Տրամադրէ Թոքերու Արիեստական Շնչառութեան 10 Սարք



«Աւրորա» մարդասիրական նախաձեռնութեան համահիմնադիրները եւ նախագահները տարածած են յայտարարութիւն, ուր կը նշուի, թէ հիւանդանոցներուն պիտի տրամադրեն թոքերու արհեստական շնչառութեան 10 սարք:

«Աւրորա» մարդասիրական նախաձեռնութեան գործընկերներու եւ աջակիցներու անունով կ'ուզենք հաստատել, որ «Քորոնա» ժահրի հիւանդութեան (COVID-19) բռնկման ու տարածման ընթացքին ամբողջապէս մտադիր ենք շարունակելու մեր ջանքերը՝ օգնելու ամենակարիքաւորներուն՝ միաժամանակ աջակցելով Հայաստանի մէջ առաջնագծի վրայ պայքարող

առողջապահութեան ոլորտի մասնագէտներուն:

«Աւրորա»-ի առաքելութեան առանցքային գաղափարը կեանք եւ յոյս պարգեւելն է անոնց, որոնք մարդասիրական աջակցութեան խիստ կարիք ունին աշխարհի որեւէ վայրի մէջ: Այդ գաղափարը աւելի քան պատեհ է յատկապէս 2020 Մարտ 11-ին Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան կողմէ COVID-19-ը համաճարակ համարելէն ետք: Եւ այսօր, աւելի քան երբեք, մենք հաստատական ենք օգնութեան ձեռք մեկնելու անոնց, որոնք այլապէս կրնային անտեսուած ըլլալ կամ ամբողջովին լքուած: Այս համաճարակը փոխած է

Ճեֆրի Ղազարեան Զոհ «Քորոնա» Ժահրի

Ամերիկեան մամուլը կը տեղեկացնէ որ, Փասատինայի մօտ գտնուող Կլէնտորա քաղաքի բնակիչ Ճեֆրի Ղազարեան մահացած է «Քորոնա» ժահրով վարակուելէ ետք: Ան վերջերս այցելած էր Ֆլորիտա եւ այդ քաղաքէն վերադարձին ունեցած է առողջական բարդութիւններ եւ արագօրէն փոխադրուած է հիւանդանոց:



ցած է առողջական այլ բարդութիւններ, որոնք մեծապէս նպաստած են մահացու վարակի ունեցման:

Քննութիւններէն ի յայտ եկած է, որ Ճեֆրիի մօտ առկայ է «Քորոնա» վարակը, սակայն հակառակ բժիշկներու ջանքերուն, կարելի չէ եղած փրկել 34-ամեայ հայ երիտասարդի կեանք: Ղազարեանի ընտանիքի անդամները յայտնած են որ, նախքան վերջին հիւանդութիւնը, ան ունե-

Հայաստան Հիմնադրամի Կոչը. «Համահայկական Ուժերու Համախմբում Ընդդէմ «Քորոնա» Ժահրի Համաճարակին»



«Նոր Քորոնա» ժահրի COVID-19 համաճարակի տարածմամբ, միջազգային հանրութիւնը կը համախմբուի եւ համապատասխան գործողութիւններ կը ձեռնարկէ: Ինչպէս քաջ յայտնի է, ճգնաժամերու ընթացքին համայն աշխարհի հայրենիքները միշտ համախմբուած է մէկ նպատակի շուրջ՝ օգնելու իրարու եւ իրենց հայրենիքին:

Եւ ժահրի յետագայ տարածումը կանխելու նպատակով:

«Քորոնա» անհամեմատ արագ աճի հնարաւորութեամբ պայմանաւորուած՝ առողջապահութեան ոլորտին անհրաժեշտ է համայն հայրենիքի աջակցութիւնը: Այդ իսկ պատճառով, Հայաստան Համահայկական Հիմնադրամը իր ստացած նուիրատուութիւնները պիտի համախմբէ եւ այս նախաձեռնութեան ընթացքին հաւաքագրուած ամբողջ գումարը պիտի ուղղէ առողջապահութեան ոլորտին անհրաժեշտ բժշկական պարագաներու տրամադրման, ինչպէս նաեւ այն ընտանիքներուն, որոնք ստեղծուած իրավիճակին դիմակայելու կարիք ունին:

ՀՀ կառավարութիւնը եւ առողջապահութեան նախարարութիւնը քաղաքացիներուն պարբերաբար թարմացող տեղեկատուութիւն կը տրամադրէ ինչպէս ներկայ իրավիճակի, այնպէս ալ վարակի տարածման յետագայ աճը կանխելու համար անհրաժեշտ քայլերու մասին:

Մեր բուժաշխատողները եւս, վտանգելով սեփական կեանքը, անձնուիրաբար եւ ջանասիրաբար կ'աշխատին հիւանդներուն օգնելու

Նուիրատուութիւններու համար այցելել Հայաստան Համահայկական Հիմնադրամի պաշտօնական կայք:

համաշխարհային օրակարգը: Մինչ աշխարհը ուժերը կեդրոնացուցած է պատուաստանիւթ արտադրելու եւ վնասը նուազագոյնի հասցնելու վրայ, փախստականներն ու խոցելի միւս համայնքները, որոնց անվերապահօրէն կ'աջակցի «Աւրորա»-ն, կը շարունակեն տառապիլ եւ COVID-19 ժահրին պատճառով բախիլ լրացուցիչ այլ դժուարութիւններու: Մեզի համար կարեւոր է տեսադաշտէն դուրս չձգել անոնց խնդիրները:

հանգանակութեամբ հիւանդանոցներուն տրամադրելով թոքերու արհեստական շնչառութեան տասը սարք:

Իբրեւ համաշխարհային շարժում՝ մարդոց անվտանգութիւնն ու առողջութիւնը մեզի համար ծայրաստիճան լուրջ հարց է: Այս դժուար ու անորոշ ժամանակներուն պարզ է մէկ բան. իւրաքանչիւր օր աշխարհի վրայ աւելի ու աւելի շատ մարդ օգնութեան կարիք պիտի ունենայ, եւ այդ օգնութեան տրամադրումը մեր պարտականութիւնն ու պատասխանատուութիւնն է:

«Աւրորա»-ն պիտի շարունակէ երկրորդ հնարաւորութիւն ընձեռել անոնց, որոնք արդէն իսկ անցած են բնական փորձութիւններու մէջէն: Միեւնոյն ժամանակ, «Աւրորա»-ն իր նպաստը պիտի բերէ համաճարակին դէմ պայքարին Հայաստանի մէջ՝ #AraratChallenge շարժման

Մարտահրաւէրը նետուած է ամբողջ մարդկութեան, եւ մենք բոլորիդ կոչ կ'ընենք միանալու «Աւրորա»-ին՝ զայն յղթահարելու ջանքերուն:

Կառավարութեան Քայլերը Այս Իրավիճակում Դրական են. 150 Միլիարդ Դրամը Լուրջ Աջակցութիւն Է Տնտեսութեան Ձարգացման Համար

ՍՈՆԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

«Կառավարութեան քայլերը դրական են գնահատում, քանի որ 150 միլիարդ դրամը, այսինքն՝ մօտ 300 միլիոն դոլարը, լուրջ աջակցութիւն է տնտեսութեան զարգացման համար», - «Առաջին Լրատուական»-ի հետ գրոյցում ասաց տնտեսագիտութեան դոկտոր, փրոֆեսոր Աշոտ Թաւադեանը՝ անդրադառնալով վարչապետի յայտարարութեանը:

Յիշեցնենք, որ Նիկոլ Փաշինեանը «հեռանկար» հաղորդաշարի յատուկ թողարկման ժամանակ յայտարարեց, որ ՀՀ կառավարութիւնն առաջիկայում 150 մլրդ դրամի աջակցութիւն կը ցուցաբերի տնտեսութեանը:

«Ուզում ենք այնպիսի միջոցներ ձեռնարկել, որով կ'աջակցենք ոչ միայն բիզնեսին, այլեւ կոնկրետ մարդկանց: Մեր տնտեսութեանը պէտք է աջակցենք: Մենք պէտք է միտուենք ապագային, ոչ թէ անցեալին: Առաջին փուլով 25 մլրդ դրամ կը յատկացնենք այն ընկերութիւններին, որոնք հաշիակն դրամով վարկ կը վերցնեն հայաստանեան բանկերից իրենց աշխատակիցներին աշխատավարձերը վճարելու, հարկային պարտականութիւնները կատարելու, կոմունալ վճարումներն անելու, հումք ձեռք բերելու եւ այլ կարիքների համար: Կառավարութիւնն այդ վարկի 50%-ը կը համաֆինանսաւորի 0%-ով, իսկ բանկի հատուածի տոկոսը կսուբսիդաւորի, որ այդ հատուածն էլ լինի 0%», - ասել է վարչապետը՝ յաւելելով. «մի բան յստակ է, որ համաճարակից առաջ էլ, յետոյ էլ մարդը շարունակելու է սնուել: Եւ սա շատ լաւ ժամանակամիջոց է, որ լրջօրէն աջակցենք գիւղատնտեսութեանը: Հիմա խնդիր ենք դրել այնպէս անել, որ գիւղավարկերը սուբսիդաւորենք այնքան, մինչեւ դառնան 0%, եւ քաջալերենք, որ շատերը զբաղուեն գիւղատնտեսութեամբ»: Ըստ վարչապետի՝ այս ոլորտում սա շղթայական ձեւով իր հետ բազմաթիւ ներդրումներ է բերելու:

Վարչապետը նաեւ նշել է, որ 30 մլրդ դրամի փաթեթ է պատրաստուել զուտ սոցիալական հրատապ աջակցութեան համար, որ պէտքի մարդկանց սոցիալական կարգավիճակի գահավիժումը բացառուի: «Այս գումարը հնարաւոր սոցիալական հրդեհը մարելու համար է. եթէ պէտք է պարզուի, որ այս ամէնի պատճառով մեր քաղաքացին պէտք է մնայ սոված, չենք կարող ասել՝ նպաստ չենք տալիս», - ասաց վարչապետը:

Թաւադեանի խօսքով՝ ճիշդ որոշում է վարկերը դրամով տրամադրելու քայլը: Ինչ վերաբերում է վարկերի տոկոսների սուբսիդաւորմանը, ապա, Թաւադեանի խօսքով՝ դա ժամանակաւոր գործիք է: «հարկաւոր է աւելի կոորդինացնել դրամավարկային եւ հարկաբյուջետային քաղաքականութիւնները, որովհետեւ բարձր վարկային տոկոսների պարագայում փաստացի մենք պետական միջոցներով նպաստում ենք թանկ փողերի քաղաքականութիւնը: Ի հարկէ, լաւ է, որ կենտրոնական բանկը իջեցրեց վերաֆինանսաւորման տոկոսադրոյքը՝ 5.5-ից մինչեւ 5.25 տոկոս՝ դրանով փորձելով նպաստել տնտեսութեան զարգացմանը ստեղծուած

իրավիճակում: Սակայն պէտք է ասեմ հետեւեալը, որ, ի հարկէ, վերաֆինանսաւորման տոկոսադրոյքը պէտք է իջեցնել այն ժամանակ, երբ որ գնաճը զրօական է կամ շատ ցածր, եւ դրա հետ մէկտեղ հակա վտանգ հնարաւոր գնաճի առկայ չէ: Այդ պարագայում 6 տոկոս եւ բարձր վերաֆինանսաւորման տոկոսադրոյք պահելը ընդունելի չէր: Տնտեսութիւնը ընդհանրապէս զարգանում է, երբ իրական վերաֆինանսաւորման տոկոսադրոյքը կազմում է ոչ աւելի, քան 2 տոկոս: Այսինքն՝ նոմինալ վերաֆինանսաւորման տոկոսադրոյք հանած գնաճ չպէտք է գերազանցի երկու տոկոսային կէտը: Այժմ, ի հարկէ, չարժէ աւելին իջեցնել վերաֆինանսաւորման տոկոսադրոյքը: Այսպիսի իրավիճակներում դա որոշակի ռիսկեր է պարունակում, սակայն այդ սկզբունքը պէտք է կիրառել կայուն իրավիճակներում՝ պարտադիր, որպէսզի մենք պետական բիւջէից հակա միջոցներ չսուբսիդաւորենք», - ասաց Թաւադեանը՝ յաւելելով, որ ներկայ իրավիճակում գումարների տրամադրու-

մը ողջունելի է, իսկ սուբսիդաւորումը՝ առայժմ ընդունելի:

Կարծում եմ հաշուետուողականութեան տեսանկիւնից «Կեդրոնական Բանկի մասին» օրէնքը նաեւ պէտք է ճշգրտուի, մասնաւորապէս խօսքը վերաբերում է 16-րդ յօդուածին: Կենտրոնական բանկը լինելով անկախ որեւէ դէպքում չպէտք է գործի որպէս շահոյթ հետապնդող կազմակերպութիւնը:

60 տարի առաջ ստեղծուած այս հրաշք ֆիլմի գրական նիւթի (սցենար) փայլուն արեւմտահայերէնը ինձ մշտապէս հիացրել է ու միշտ զարմացել եմ, թէ ինչպէ՞ս է յաջողուել Ատրպետին՝ այդքան հարազատորէն վերարտադրել պոլսահայ միջավայրը, բառն ու բանը, զգլխիչ հումորը:

Շատ լաւ իմանալով, որ «Տժվժիկ» պատմուածքի հեղինակ Ատրպետը (Սարգիս Մուպեաճեան)

նշոյլն անգամ չկայ Ատրպետի՝ առաջին հայեացքից պարզունակ թուացող պատմուածքի մէջ: Իսկ երկխօսութիւնները (Dialogs)՝ ընդհանրապէս գոյութիւն չունի պատմուածքի մէջ: Սա մի իրական պատմութիւն է, որը տեղի է ունեցել 19-րդ դարի կէսերին՝ Պարսկաստանի հայաշատ գաւառներից մէկում: Եւ, Ատրպետը 3-րդ դէմքով պատմում է իրականութիւնը՝ պարսկահայերէնին մօտ գաւառական բարբառով:

Գրեթէ ոչինչ չասող այդ պատմուածքի նիւթը Երուանդ Մանարեանը հանճարեղ մտայնացմամբ վեր է ածել իրարէջաջորդ համոզիչ գործողութիւնների, որոնք իրականացնող հերոսները կարծես թէ քոքով-պորտով պոլսահայեր լինեն: Մանարեանը պահել է Ատրպետի նկարագրած վայրերը (փողոց, մսավաճառի խանութ, սրճարան, բաղնիք, եկեղեցի), որոնց մէջ հերոսները իրար հետ հաղորդակցուած են միանգամայն անթերի պոլսահայերէն լեզուով՝ մշակուած սուր եւ դիպուկ հումորային երկ-



արեւելահայ գրող է, կարսեցի, երկար տարիներ ապրած Պարսկաստանում եւ Լենինականում, որ քան էլ տիրապետեր արեւմտահայերէնին (յատկապէս պոլսահայերէնին, - Հեն. Ա.), հազիւ թէ կարողանար անթերի լեզուով ընթերցողին մատուցել տրագիկոմեդիա յիշեցնող պատմութիւնը: Կասկածներս փարատելու համար որոշեցի երկա՛ր տարիներ անց նորովի ընթերցել Ատրպետի «Տժվժիկ» պատմուածքը: Եւ ի՞նչ պարզուեց.

- Աստուած իմ, այս ի՞նչ բան է, - մտածում եմ, արեւմտահայերէնի, մանաւանդ՝ պոլսահայերէնի

խօսութիւններով:

Կասկած չկայ, որ ծնունդով պարսկահայ Երուանդ Մանարեանը «Տժվժիկ»-ի սցենարը գրելիս մեծապէս օգտուել է երեք թրքահայ հանճարեղ արտիստների պոլսահայերէն լեզուի իմացութիւնից:

«Տժվժիկ» ֆիլմով Երուանդ Մանարեանը իրաւամբ կերտել է իր «Անձեռակերտ Յուշարձան»ը, որի գլխաւոր բաղադրատարրերն են՝ բեմադրիչ Արման Մանարեանը (Երուանդի եղբայրը), մեծամեծ դերասան Հրաչեայ Ներսիսեանը, Յոլակ Ամերիկեանը, Արման Կոթիկեանը եւ երաժշտութեան հեղինակ էդուարդ Պաղտասարեանը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Կեանքի եւ Մահուան Երգեր

ԴՈՎՏ. ԳՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

Մատթէոս Զարիֆեանի գրական գործերը սորված եմ, երբ աշակերտ էի Պէյրուսի Հայ աւետարանական կեդրոնական բարձրագոյն վարժարանի մէջ: Կրցած էի տեսնել ու համոզուիլ, թէ ինչպէ՛ս իր այդ կարճ կեանքին ընթացքին ան կրցաւ ստեղծագործել եւ ձգել գրական ու բանաստեղծական մեծ ժառանգ: Ան շատ կանուխ վարակուած է թոքախտէ եւ երկար տարիներ պայքարած այդ հիւանդութեան դէմ՝ մինչեւ երեսուն տարեկան, երբ իր մահկանացուն կնքեց: Ան քնարերգակ բանաստեղծ է, որուն բանաստեղծութիւններուն մէջ մէկ կողմէ կայ թախիծ ու տիրութիւն, բայց նոյնքան ալ՝ խոր սէր: Սէրը՝ կեանքին նկատմամբ, իսկ թախիծը՝ մահուան: Վերջապէս երիտասարդ տարիքին ան պայքարեցաւ կեանքի եւ մահուան իրականութիւններուն դէմ եւ իր ժառանգը եղան «երգեր»-ը... Երգեր՝ կեանքի ու մահուան:

ամէն տեղ տարածուած է եւ յայտարարուած իբրեւ համաճարակ:

Դէմքս ծածկեցի եւ մտայ շատ մեծ սրահ մը, ուր իրարմէ քիչ մը հեռու կային աթոռ-գրասեղաններ՝ ետեւ ետեւի եւ կանոնաւոր կերպով շարուած: Նստեցայ անոնցմէ մէկուն վրայ եւ նայեցայ չորս կողմս: Սրահը ողողուած էր ինծի նման քննութեան ենթարկուողներով: Կը լսէի միայն արաբերէն, եւ ի յայտ եկաւ, որ Լիբանանի կողքին կային նաեւ Սուրիան եւ Եգիպտոսը, ուրկէ վերադարձողները պէտք էր նոյնպէս քննութեան ենթարկուէին:

Նստայ ու սկսայ դիտել չորս կողմս, նաեւ մտածել: Քննութիւն: Եւ նկատի ունենալով, որ նստած էի գրասեղանի մը ետին՝ յար եւ նման համալսարանի մեր ուսանողութեան տարիներուն, սկսայ ապրիլ այդ օրերու յուշերը եւ զգացումները: Քննութիւն՝ համալսարանի տարիներուն, որքան մտահոգութիւն եւ անձկութիւն կը յառաջացնէին, նոյնիսկ երբ ճշդուած նիւթերը լաւ



Արագ ակնարկ մը նետելով ներկայ օրերու աշխարհին ապրած վիճակին եւ «Քորոնա» ժահրին ստեղծած թոհուբոհին, կը նկատենք, թէ կեանքի ու մահուան որքա՛ն երգեր կան քիչ մը ամէն տեղ: Չեմ գիտեր աշխարհի քաղաքական, ընկերային եւ տնտեսական կեանքի եւ պատմութեան մէջ ե՛րբ այսքան համընդհանուր եւ միասնական ահազանգ կար, ինչպէս որ է պարագան այսօր՝ այս ժահրին եւ անոր սպառնալիքներուն դէմ յանդիման:

Մարտ 13, 2020, Քուէյթ: Ինչպէս ամբողջ աշխարհը, Քուէյթն ալ կը պայքարի կանցնելու համար այս ժահրին սարսափազդու վտանգը: Առողջապահութեան նախարարութեան պատասխանատու պաշտօնեան հարցուց ինծի.

- Ե՞րբ վերադարձար Քուէյթ եւ ո՞ր երկրէն:
- 29 փետրուարին, Պէյրուսէն, - եղաւ արագ պատասխանս:
- Ուրեմն պէտք է յատուկ քննութեան ենթարկուիս, որպէսզի ապահով զգանք, թէ չես վարակուած այս ժահրէն, - եղաւ արձագանգը:
- Կրցած էի տեսնել, թէ միայն քանի մը երկիրներ նեոարուած էին այն ցանկին մէջ, ուրկէ վերադարձողները պէտք էր յատուկ քննութեան ենթարկուէին: Եւ այդ ցանկին վրայ՝ անպայմանօրէն Լիբանանը: Այլեւս չեմ ուզեր մտածել, թէ ինչո՞ւ Լիբանանը եւ ոչ ուրիշ երկիրներ, երբ ժահրը քիչ մը

սորված ըլլային: Վերջապէս քննութիւն էր: Եւ համալսարանի տարիներուն գրասեղանները կը շարուէին մէկը միւսին ետեւ նոյն հեռաւորութեան վրայ՝ յար եւ նման Քուէյթի այս քննութեան սրահին: Եթէ այդ համալսարանի օրերուն պէտք էր կեդրոնականը հարցունքներուն եւ զանոնք պատասխանելու վրայ, բայց կային նաեւ աշակերտական մեր ճարտարութիւնները: Մէկը միւսին փսփսալու տրամադրութիւնները՝ պատասխանները իմանալու եւ կամ հաստատելու ցանկութեամբ: Բայց հոս՝ Քուէյթի մէջ, միմեկ էի, պէտք էր պատրաստուէի իմ քննութեան եւ արդիւնքին, որուն մէջ դեր չունէի այս պարագային:

Այդ մտածումներով տարուած, նաեւ սկսայ տեսնել, թէ ինչքան բարակ թել մըն է եղեր, որ կը բաժնէ կեանքը մահէն: Եւ կը սկսիս մտածել այն խուճապին մասին, որուն այսօր ամբողջ աշխարհը մատնուած է եւ կը փորձէ ամէն գնով առաջը առնել եւ հետամուտ ըլլալ, որ կեանքի եւ մահուան միջեւ եղած այդ բարակ թելը չփրթի: Ու սկսայ տեսնել, թէ ինչքան պայքար կայ կեանք-կեանքերը պահելու համար, ինչքան նախագոյնաւորութիւն՝ կանխարգիլելու համար այս ժահրը, որ մահուան սպառնալիք է: Շատ լաւ են այն բոլոր միջոցները, որոնք իւրաքանչիւրս կը ստիպեն զգուշաւորութեան եւ զգաստութեան: Ուզեցի գնահատել Քուէյթի կա-

ռավարութիւնը՝ իր այս նախագոյնաւորութեամբ:

Կը փորձուիմ մտածել՝ չարամտութիւն, թէ՞ ոչ: Բայց ինչո՞ւ այս ժահրը կրցաւ այսքան աղմուկ եւ մտահոգութիւն յառաջացնել: Բայց չէ՞ որ աշխարհի տարբեր անկիւնները երեւի ամէն օր կայ պատուհաս-պատերազմ, ուր նաեւ մարդկային հոգիներ կը խլուին, եւ անմեղներ կը մահանան: Եւ ինչո՞ւ այս մէկը՝ «Քորոնա»-ն, պիտի զգլխէ ու անցնի միւս բոլոր վտանգները: Արդեօք միւս պատուհասները նուա՞զ կարեւոր եւ նուա՞զ վտանգաւոր են, քան «Քորոնա»-ն: Երկու չափ երկու կշի՞ր, թէ այլ:

Բայց կայ աւելին: Եւ հոն՝ այդ մեծ սրահին մէջ, սկսայ մտածել այդ աւելիին մասին: Երեւի մահուան սպառնալիքն է, որ կը ստիպէ զիս՝ այդ աւելիին մասին մտածելու: Եթէ ակնթարթի մը մէջ ժահր մը մէջտեղ կու գայ, արագօրէն կը սփռուի աշխարհով մէկ՝ անդամալուծելով գայն, վախի, յուսահատութեան եւ մահուան մթնոլորտ տարածելով ամէնուրեք... Ուրեմն ո՞ւր է կեանքը, անոր արժէքն ուժը այս բոլորին դիմաց:

Այդ մեծ սրահին մէջ նստած, կարծէք, կեանքի թելին կենդանութեան կողմը կը գտնուէին՝ ջանալով այնպէս ընել, որ թելը չփրթի: Իսկ եթէ փրթի: Ինչպէ՞ս կեանքին պիտի փարինք, եւ ի՞նչ է արժէքը կեանքին, ինչպէ՞ս պէտք է իմաստաւորել գայն, երբ ժահր մը կարծէք գողի նման եկած է հնձելու աշխարհի կեանքերը:

Կը վերադառնամ հայ գրականութեան դասապահերու, Մատթէոս Զարիֆեանն է կրկին: Նկատի ունենալով, որ իր երիտասարդ տարիքին ան պայքարեցաւ կեանքի ու մահուան դէմ՝ գրած է.

«Կեանքը... որքան կը սիրեմ գայն հիմա:

Տէր Աստուած, արդեօք շատ ուշ չէ՞»:

Մատթէոս Զարիֆեան միշտ ալ սիրեց կեանքը, նոյնիսկ երբ գիտէր, թէ շատ օրեր չէին մնացած իրեն համար աշխարհի մէջ: Եւ արդէն ուշ չէ՞ր: Բայց Զարիֆեանի ընտրութիւնը՝ իր սէրը կեանքին նկատմամբ, մղեց գայն արտադրելու: Արտադրելու արժէք:

Եւ այդ օր, այդ սրահին մէջ, քննութեան պահուն սպասելով, դարձեալ ուզեցի տեսնել իմ կեանքս: Եւ թէ ի՞նչ ընտրեցի իմ կեանքիս համար եւ տակաւին ի՞նչ պիտի ընտրէի: Տեսայ ու համոզուեցայ, թէ կը սիրեմ ԱՐԺԵՔԸ կեանքին եւ այդ Արժէքին հիմքն ու գայն անուցանողը՝ Աստուածաշունչը: Եւ այդ օր դարձեալ կարդացի Արամ Ա. վեհափառ հայրապետին հարցազրոյցը, որուն մէջ ան հետեւեալ միտքը արտայայտած է. «Աստուածաշունչն է մեր հոգեւոր արժէքներու աղբիւրը եւ, որպէս քրիստոնեայ ազգ, մեր արժէքներու համակարգային հիմքը»: Եւ տեսայ, թէ ինչպէս Աստուածաշունչը եւ անոր պարգեւած ու շնորհած կեանքը տուած է ապրելու եռանդ եւ ուժ մեր հայ ժողովուրդին, նոյնիսկ երբ նոյն հայը դէմ յանդիման

գտնուեցաւ շատ մը ժահրերու իր կեանքի տարբեր հոլովոյթներուն մէջ եւ մինչեւ այսօր:

Եւ Մեծ պահքի այս օրերուն տեղին է խորհրդածել Քրիստոսի մահուան եւ Անոր յարութեան մասին: Անոր յարութիւնը, ուր Ան յաղթեց մահուան ու նոր կեանք շնորհեց մարդկութեան: Եթէ Քրիստոս յաղթեց մեղքին՝ չարին, չի նշանակեր, թէ չարը եւ մեղքը վերացան աշխարհէն: Մեր իւրաքանչիւրին կեանքը այսօր ամէնօրեայ պայքար է բարիին ու չարին միջեւ, եւ թէ որո՞ւ անձնատուր կ'ըլլաս այդ պայքարին մէջ: Քրիստոսի շնորհած նոր կեանքը, զոր Ան կերտեց յաղթելով մահուան՝ իմա՛ հոգեւոր ինքնութիւնը եւ գիտակցութիւնը, կը գտեալնդէ մարդը՝ պայքարելու համար չարին դէմ եւ յաղթելու նոյն այդ չարին: Քրիստոնեան աշխարհին մէջ հոգեւոր արժէքներով, գիտակցութեամբ եւ հոգեւոր գինամթերքով է, որ կարելի է ամբօրէն կանգնիլ չարին եւ մեղքին դէմ:

Ասկէ մեկնած պէտք է ընկալել այն իրականութիւնը, թէ՛ թէ՛ եւ հոգեւորը անբաժան մասն է աշխարհին, բայց եւ այնպէս աշխարհէն չէ, որովհետեւ քրիստոնեան ունի իր արժէքները, որոնցմով կ'ապրի եւ կ'առաջնորդուի աշխարհիկ իր կեանքին մէջ՝ անհատական թէ՛ հաւաքական մակարդակի վրայ: Քրիստոսի խոստումն ալ այս մէկը կը հաստատէ. «Ես եկայ, որ կեանք ունենան եւ ալ աւելի կեանք»: (Աւետարան ըստ Յովհաննու 10:10):

Քրիստոս ըսաւ. «Ես եկայ»: Քրիստոս եկաւ աշխարհ՝ գայն աւելի լաւ վայրի մը վերածելու համար, իսկ մենք այսօր այդ աւելի լաւ աշխարհին մէջ կ'ապրինք եւ կը պայքարինք չարին դէմ՝ արժէքներ ստեղծելով ու պահելով: Այսպէս է, որ աւելիով կը յաղթենք ոչ միայն երկրի վրայ, այլ նաեւ յաւիտենականութեան մէջ:

«Քորոնա»-ի քննութեան ժամը հասաւ: Քննութեայ եւ դուրս եկայ՝ մաքուր: Խաղաղա՞ծ էի: Երեւի: Բայց տակաւին տունը նստած պէտք է պատասպարուիլ, քանի որ ժահրը դուրսն է, պիտի սպասենք կ'երեւի, մինչեւ այն օրը, երբ ժահրը անհետանայ: Կը սպասենք:

Բայց մինչ այդ, կան «կեանքի եւ մահուան երգերը»: Մատթէոս Զարիֆեանի, բայց նաեւ բոլոր աշխարհին: Աշխարհը երեւի պիտի տեսնէ, թէ ի՞նչ պիտի պահէ, ո՞ր երգը պիտի ուզէ երգել՝ կեանքի ու անոր արժէքին՝ թէ՞ մահուան:

Եւ կեանքը երգելու համար արժէ մտածել նոյն կեանքի արժէքին մասին, որուն համար վեհափառ հայրապետի խօսքը հիմք կը հանդիսանայ՝ «Հոգեւոր կեանքի վերանորոգումը հրամայական է»:

Արդարեւ, հոգեւոր կեանքին հիմքը Աստուածաշունչի շնորհած նոր կեանքն է՝ ինծի, քեզի եւ բոլորին: Այս կեանքի վերանորոգումով է, որ մեր կեանքերը կը ստանան ուժ ու արժէք: Եւ այս ուժով եւ արժէքով կրնանք յաղթել չարին՝ մեղքին:

Նաե՛ւ՝ «Քորոնա» ժահրին:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթերթին
 Tel: (626) 797-7680
 Massis2@earthlink.net

Ե՞րբ Հիմնուած Է Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը

ԱՐԱՐՈՆ ՇԽՐՏԸՍԵԱՆ

Իբրև տարագիր ժողովուրդի ժառանգորդ՝ տրամաբանութիւնը պիտի ըսէր, որ Կիլիկիոյ ոստաններէն բռնագաղթած մեր պապերը 20-ական թուականներուն վերջաւորութեան շատ հաւանաբար հիմքը դրած են մեր հայրենակցական միութիւններուն: Սակայն վերջերս, մեր հայրենակցական միութիւններուն պատմութեան էջերը թերթելու միջոցին, մեծ եղաւ զարմանքս, երբ նկատեցի, թէ Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը կազմուած է ոչ 1928-ին, ինչպէս կը յայտնեն շատեր, այլ՝ 1915-ին:

Հայրենասիրութեան զգացումը, որքան բնածին, նոյնքան գիտակցական է հայ ժողովուրդին մէջ:

Այդ գիտակից հայրենասիրութեամբ տոգորուած, ամուր նկարագիրով եւ վերածնունդի անասման հաւատով՝ հայ ժողովուրդը յաջողած է դիմադրել դարաւոր գերութեան եւ այդ գերութեան մէջ վառ պահել յաղթանակի յոյսը:

Առաջին Համաշխարհային

ներք իրենք եւս կը փափաքին լոյս ընծայել «Նոր Հաճըն»-ը: Միութեան պաշտօնական օրկանը մինչեւ օրս կը շարունակէ լոյս տեսնել Պուենոս Այրէսի մէջ:

Ստեփան Կ. Շիրտըմեանի վկայութեամբ՝ 25 Օգոստոս 1915-ը պէտք է ընդունիլ իբրև Հաճնոյ Հայրենակցական Միութեան կազմութեան թուականը: «Նոր Հաճըն» ամսաթերթի Յուլիս-Օգոստոս 1948 համարին մէջ ան կը գրէ.

«Ասկից 33 տարիներ առաջ, այսինքն՝ 1915-ին, Առաջին Համաշխարհային աւերիչ եւ կործանիչ պատերազմը երբ պայթեցաւ, Հաճընցիները աւերահասնութեամբ քուտեցաւ տառապանքի եւ չարչարանքի գողգոթան՝ քաւելու համար իր քրիստոնեայ ըլլալու մեղքը, ու այդպէսով ցաւալի յիշատակներ ձգեց իր ետեւ.

Ա. Կորսնցուց իր ժողովուրդին 3/4-ը, որոնց մէջ էին մեր տարիքոտ, խելօք եւ նաեւ տարեկից բոլոր սեռի հայրենակիցները:

Բ. Հաճնոյ իննամսեայ գոյամարտը, որ արդէն ծանօթ է համայն



օրը, ազատարարի մը ծննդեան կամ մահուան թուականը, քաղաքի մը հիմնադրութեան թուականը, ազգային յաղթանակի օրը կամ ազգային որեւէ նշանաւոր օր չի մոցուիր երբեք ու նոյն ազգի ժողովուրդը իւրաքանչիւր տարի խանդավառութեամբ կը նշէ այդ պատմական օրը՝ վերահաստեղծելով, արժեւորելով անոր խորհուրդն ու նշանակութիւնը:

Հաճընցիներս ունինք երկու պատմական թուականներ, որ չենք կրնար մոռնալ: Առաջինը՝ Հաճըն ընկերութեան հիմնադրութեան օրը՝ 25 Օգոստոս 1915: Հաճըն ընկերութիւնը 1928-ին վերանուանուած է Հաճնոյ Հայրենակցական Միութիւն: Երկրորդը՝ տխուր պատկերի մը յիշողութիւնը, Հաճնոյ անկման օրը՝ 15 Հոկտեմբեր 1920:

Պանծալի պատմութիւն մը ունի հաճընցիներ, որ պատիւ կը վերէն ոչ միայն մեր ազգին, այլ հանուր մարդկութեան, իր հերոսական, նուիրուածի եւ գոհաՎերութեան պանծալի էջերով եւ օրինակներով: Ո՛չ գրելով եւ ո՛չ ալ պատմելով կարելի է պատկերացնել հաճընցիին ենթարկուած իննամսեայ տառապանքը:

Մեր պապերը ի՞նչպէս կերտեցին այն հերոսական էջերը, որպէսզի պարծենանք, երկու խօսքին մէկը եւ միշտ՝ «Մենք հաճընցի ենք» ըսելով:

Անոնք Հաճնոյ հերոսական պատմութիւնը կերտեցին ամէն բանէ վեր դասելով հայ ժողովուրդին պատիւը եւ արժանապատուութիւնը:

Իր ոսկեպսակ էջերով հարուստ Հաճնոյ պատմութիւնը ցոյց կու տայ, որ մեր պապերը փոխադարձ սէր, վստահութիւն, հաւատարմութիւն եւ յարգանք ունէին իրարու հանդէպ՝ միշտ գիրար պաշտպանելով:

Անոնք մահացան կրակի բոցերուն մէջ, բայց չգիշերեցան: Հաճընցիին մնաց հպարտ եւ ճակատա-

բաց: Մենք պարտք կը համարենք մեր յարգանքի բաժինը բերել այն մարտիրոսացած քաղաքին եւ անոր ազատագրութեան համար մարտնչող հերոսներուն, որոնք տուին իրենց թանկագին կեանքը:

Որքան բախտաւոր պէտք է համարել մեր սերունդը, երբ այս պահուս կ'ապրինք եւ կը տեսնենք մեր նախորդ սերունդներուն երազած, մեր բոլորին գոյութեան օրրան, ազատ եւ անկախ Հայաստանի հրաշափառ ծնունդը:


Միւս կողմէ, համոզուած եմ, որ ինչպէս համայն հայ ժողովուրդը, նոյնպէս ալ հաճընցիներս օրերուն կ'ապրին ինքնագիտակցութեան եւ հայրենասիրական պարտականութեան հոգեզրու ամենախոր գագաթներով:

Միբիլի՛ եւ յարգելի՛ ընթերցող: Եթէ պատմութեան մէջ իրենց պատու տեղը զրաւող մեր պապերը ի սպաս հայրենիքին դրին իրենց կեանքը, մենք՝ վերապրողներու ժառանգորդներս, լուրջ պարտաւորութիւններ ունինք մեր ուսերուն վրայ:

Մեր պապերը չսակարկեցին իրենց կեանքը, երբ գոհողութիւն պահանջուեցաւ մեր սրբութիւնները պաշտպանելու համար: Անոնք տուին իրենց ամէնէն նուիրականը՝ կեանքը: Այսօր, մեր պարտականութիւնն է յարգել անոնց կտակը, յաւերժացնել յիշատակ մեր նահատակներուն՝ վաղուան սերունդին փոխանցելու Հաճնոյ հերոսական պատմութիւնը, Արծուաբոյնի ազատամարտիկներուն կտակը, անոնց հաւատոյ հանգանակը:

Մարտիրոս եւ Մուրատ Պոյաճեաններու նման առաքեալներու, Աղասիի նման չեղափոխականներու ծննդավայր Հաճնոյ աւանդութիւնները յաւերժացնելու պարտականութիւնը ունինք բոլորս:

Հանգիստ Հաճնոյ հերոսներու սրբազան աճիւններուն եւ յարգանք անոնց խնկելի յիշտակին:



պատերազմի ընթացքին Պուենոս Այրէս գաղթած շուրջ ութսուն հաճընցի երիտասարդներ՝ հայրենիքի եւ Հաճնոյ անմար սէրը իրենց կուրծքերուն մէջ, ինչպէս նաեւ նկատի ունենալով տարագրութեան սպանդէն վերապրող հաճընցիներուն անցուկ կացութիւնը, խորհրդակցելով անմիջապէս կը կազմեն «Հաճըն ընկերութիւն» անունը կրող օգնութեան միութիւն մը՝ ծրագիր ունենալով կարօտաց նպաստ ընծայել եւ յաւերժ պահել հայրենի ծննդավայրին անուրծ:

Այս վկայութիւնը կը կատարէ Մեծ Եղեռնի նախորդող օրերուն Հաճընէն Պուենոս Այրէս գաղթած, Հաճնոյ մեծատան գաւակ՝ Ստեփան Կարապետի Շիրտըմեանը:

Հաճըն ընկերութիւնը հիմնելու ծրագիրը կը պսակուի յաջողութեամբ: Անոնք միաժամանակ կոչ կ'ընեն Սփիւռքի բոլոր հաճընցիներուն, որպէսզի յար եւ նման միութիւններ կազմեն իրենց շրջապատին մէջ: Իսկպէս մեծ կ'ըլլայ խանդավառութիւնը: Սփիւռքի այն ոստաններուն մէջ, ուր 5-10 հաճընցիներ կը գտնուէին, կը կազմեն հայրենակցական միութիւններ:

Հաճընցիք կը փափաքին թերթ մը ունենալ ծննդավայրին անունով: Անդրանիկ նախաձեռնակը կը դառնայ հայրենակից Սարգիս Ալթունեանը, Մարտէլի մէջ: «Նոր Հաճըն»-ը կը դառնայ հայրենակիցներու պարծանքը: «Նոր Հաճըն»-ը հետագային կը շարունակուի Հիւսիսային Ամերիկայի մէջ: Պուենոս Այրէսի մեր հայրենակից-

հայութեան: Հաճընցիները կուրծքով ուզեցին ապրիլ եւ ապրեցնել ազգային պատիւն ու ազատութիւնը: Բայց աւանդ, որ շատ կարեւոր պիտոյքներու պակասութեան պատճառով ինկան կուռուց պատնէշին տակ, բաժնուելով յաւիտեանս եւ այդպէսով թուղուցին ցաւալի բաց մը:

Գ. Իսկ երրորդը յիշտակ մըն է: Այն է՝ Հաճնոյ Հայրենակցական Միութեան կազմութիւնը, որ 33 տարուան կեանքին մէջ թողուց ու պիտի թողու բարոյական եւ նիւթական շատ մը գնահատելի հետքեր, որոնք արժանացան ու կը յուսանք թէ տակաւին պիտի արժանանան շատ մը գնահատանքներու:»

Այս տողերէն մէկանգամ ընդմիշտ յստակ կը դառնայ Հաճնոյ Հայրենակցական Միութեան կազմութեան թուականը:

Ստեփան Շիրտըմեանի վկայութեամբ՝ 1915-ին հիմնուած Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը կը հաշուէր 53 անդամ: 1948-ին ան ունեցած է քսան մասնաճիւղ եւ հազարաւոր անդամներ, որոնք ոչ միայն խօսքով, այլեւ նիւթական եւ բարոյական գոհողութիւններով վառ պահած են հաճընցիութեան եւ հայրենիքին ծառայելու ոգին:

Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը շուտով կ'ունենայ իր ծրագիր կանոնադրը՝ օգնել հաճընցի թշուառ եւ կարօտեալ ընտանիքներուն եւ հայրենիքի մէջ կառուցել Նոր Հաճըն աւանը:

Ժողովուրդի մը ազատագրութեան, երկրի մը անկախութեան

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: _____
 Address: _____
 City: _____ State: _____ Zip Code: _____
 Country: _____
 Tel: _____ Email: _____

Սուրբ Քառասուն Մանկունք Սերաստիոյ Ուխտանէս Սերաստիոյ Եպիսկոպոս Պատմիչին Վկայութիւնը

«Եւ այս հանգամանքով մենք հաստատեցինք Արեգ ամսու 15-րդ օրը որպէս յիշատակի տօն Քառասուն Սուրբերուն, անխափան կատարուելու տարուէ տարի Աստուծոյ փառքին համար»
ՈՒՒՏԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՍՏԻՈՅ

ԴՈՎՏ. ՉԱԲԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆ

Նահատակներուն Յիշատակը

Երբ այսօր Շաբաթ Մարտ 21-ին կը յիշատակենք Քառասուն Մանկանց օրը, կը վերջիչենք թէ կանխագոյն վկաներէն հանդիսացան անոնք, նահատակուելով Սերաստիոյ սառած լիճին մէջ յանուն Քրիստոսի՝ Հռոմէական կայսրութեան Լիկիանոս փոխ-կայսեր հրահանգով 320 թուին: Անոնք մաս կը կազմէին կայսերական արեւելեան բաժնի բանակին, բոլորն ալ զինուորներ, միասնաբար քրիստոնէութիւնը դաւանած, հակառակ Լիկիանոսի վճռական արգելքին թէ բանակը չէր թոյլատրեր քրիստոնէայ կրօնքի հետեւորդ զինուորներ ունենալ:

Կայսրութիւնը կը գլխաւորէր Մեծն Կոստանդիանոս Ա կայսրը որուն ենթակայ էր Լիկիանոս ուրացող: Կոստանդիանոս իր մահուան անկողնին մէջ քրիստոնէայ մկրտուեցաւ 337 թուականին, եւ սակայն անկէ առաջ հրաւիրած էր Քրիստոնէայ Եկեղեցւոյ Նիկիոյ Առաջին Տիեզերական Ժողովը 325 թուականին: Այնպէս որ Քառասունը նահատակներէն առաջ կայսրութիւնը որպէս թոյլատրեալ կրօն հռչակած էր քրիստոնէութիւնը 313 թուին Միլանի հրամանագրով եւ հովանաւորութեամբ Կոստանդիանոս կայսեր, որմէ եօթ տարիներ ետք 320 թուին Քառասուն Մանկունք կը նահատակուէին, որուն հետեւանքով Լիկիանոս 324 թուին գահընկէց եղաւ կայսեր հրահանգով:

Հայ Եկեղեցին յատուկ չարգանք եւ նուիրում ընծայած է Քառասուն Մանկանց յիշատակին, բազմաթիւ հայ Եկեղեցիներ անոնց անունով օծելով աշխարհի չորս ծագերուն, հակառակ որ անոնց մէջ ոչ մէկ հայ զինուոր գտնուած է: Արդէն հրաջք մըն է անոնց անուններուն անաղարտ մնալը հնագոյն այդ դարերէն ի վեր, որուն վկայութիւնը կուտայ հայ պատմիչ Ուխտանէս Եպիսկոպոս որ Սերաստիոյ երկարամեայ հոգեւոր Առաջնորդը եղած է 10-րդ դարուն, երբ կը հաստատէր տեսած ըլլալ անոնց անունները, յոյն եւ հռոմայեցի, թէեւ առանց յիշելու գանոնք, որոնք «արձանագրուած էին Սերաստիոյ Եկեղեցական հաստատութեանց սիւններուն վրայ» ինչպէս կը գրէ Ուխտանէս Եպիսկոպոս: Այսօր բոլոր քառասուն անունները կը կարգանք մարտիրոսաց յատուկ հատորներուն մէջ:

Հայ Եկեղեցին եւ Քառասուն Մանկունք

Նախ հարկ է «Մանկունք» կամ «Մանուկ» բառերը սահմանել իրենց բնագրային գրաբար լեզուին համաձայն եւ չհասկնալ որ այդ քառասուն նահատակները փոքրիկ երախաներ էին, ինչպէս սխալմամբ կը հասկնան շատեր եւ կը գրեն երբեմն աշխարհաբարի հետեւութեամբ, յատկապէս երբ անգլերէնի կը թարգմանեն գաջն: Միայն է անշուշտ եւ անզիտութեան ապացոյց է երբ երախաներ կը նկատ-


ուին նահատակները ու անոնց Քրիստոսի վկայութեան պատիւը կ'ընծայեն, առանց մտածելու որ երախաներ ինչպէս լսած կրնային ըլլալ նոյնիսկ Քրիստոսի անունը, թող անոր վկայութեան համար իրենց նահատակուելը: Գրաբար լեզուով պարզապէս «մանուկ»ը այս պարագային «զինուոր» կը նշանակէ, ինչպէս կը նշանակէ նաեւ մեր գիտցած մանուկը: Վերջերս կը կարդայի «Քառասուն Մանկանց հայ Եկեղեցւոյ» անունին ընծայուած անգլերէն գրութիւն մը, որ թարգմանաբար եւ անփութօրէն գաջն կը կոչէր «քառասուն երախաներու հայ Եկեղեցի»:

Հայ Եկեղեցւոյ նկատմամբ այս յիշատակելի նահատակութիւնը իր պատմական կապը հաստատած է երկու իրողութեանց վրայ, մին Քառասուն Մանկանց նահատակութեան վայրին՝ Հայաստանի հողին վրայ, Սերաստիոյ նահանգի սառած լիճին մէջ, եւ միւսը՝ Հայաստանի կանխագոյն պետական Մեծ Դարձի իրողութեանը 301 թուին, Հայաստանի առաջին կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսաւորիչի քարոզութեամբ եւ Տրդատ Գ Արշակունի թագաւորի հրովարտակով: Կայսրութեան բանակի զինուորները անկասկած քաջալերուելով Հայաստանի նորադարձ պետական կրօնքէն իրենք եւս դարձի եկան երբ տակաւին, իրենց նահատակութենէն վերջ նոյնիսկ, բոլոր երեքը կ'ապրէին, Կոստանդիանոս Մեծ կայսրը, Տրդատ Թագաւորն ու Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:

Ուխտանէս Պատմիչ Եպիսկոպոսը

Հակառակ Քառասուն Մանկանց նահատակութեան եւ Ուխտանէս Եպիսկոպոսի Սերաստիոյ հայոց թեմի առաջնորդութեան միջեւ եղած 600 տարիներու երկար ժամանակահատուածին, Ուխտանէսի գրած եւ մեզի հասած երկու հատոր «Պատմութիւն Հայոց» Ա Գիրքին լման 61-րդ գլուխը անփոխարինելի է գոր յատկացուցած է Քառասուն Մանկանց նահատակութեան: Տարիներ առաջ ինծի պարտք համարեցի առաջին անգամ ըլլալով անգլերէնի թարգմանել Ուխտանէս պատմիչի երկու հատորները, առաջինը հայոց հին պատմութեան մասին քաղուածք մը՝ մինչեւ Հայաստանի քրիստոնէութեան դարձը, եւ երկրորդը աւելի կարեւոր՝ վաւերագրական թղթակցութիւններով եւ կոնդակներով պատմագրուած Վրաստանի ուղղափառ Եկեղեցւոյ բաժանումը Հայ Եկեղեցւոյ ենթակայութենէն 607 թուականին Աբրահամ Աղբաթանեցի Հայոց կաթողիկոսի եւ իրեն անհնազանդ գտնուող Կիւրիոն վրացի Եպիսկոպոսի օրով:

Ուխտանէս ծնած էր Ուրհա եւ սակայն ծանօթ եղած է շետապայ պատմիչներուն որպէս Ուխտանէս Սերաստիոյ որ ցկեանս թեմի Եպիսկոպոսութիւնը վարած է եւ տուած այն տեղեկութիւններ Սրբոց Քառասունից Մանկանց նահատակութեան մասին, իրենց աշխարհագրական տուեալներով, թէ ո՛ր կը մնային իրենց համար որպէս ապա-



ւէն, լեռներն ու բերդերը, եւ թէ որպէս զինուորներ ո՛ր կը բանակէին իրենց պարտականութեանց վրայ եղած միջոցին: Հայ Եկեղեցւոյ Սերաստիոյ թեմը 914 թուին հաստատուած է եւ շատ հաւանական է որ Ուխտանէս առաջին Եպիսկոպոսը եղած է թեմին: Թէեւ արեւմտեան բանասիրութեան մէջ չարակից տեղեկութիւնները հարուստ են, ինչպէս Քառասունից անունները յստակ եւ լրիւ, սակայն նման ականատեսի վկայութիւններ գործի վրայ եղող Եպիսկոպոսին կողմէն կը պակսին այնտեղ, որուն Ուխտանէսի իմ կատարած վերջին անգլերէն թարգմանութիւնը պիտի գար աւելցնելու այն ինչ որ ականատեսի վկայութեամբ հաստատած է պատմիչ Եպիսկոպոսը:

«Քառասուն Նահատակներու Մասին» (Ա. գլ. 61)

Ուխտանէս կը սկսի գրելով թէ «չենք մոռնար այստեղ վկայելու Սուրբ Քառասուն [Չինուորները] մասին որոնք նահատակուեցան ուրացող Լիկիանոսի կողմէ որ յատուկ հրովարտակով հայածանք յայտարարած էր իրեն ենթակայ նահանգներու Եկեղեցիներուն դէմ»: Պատմիչ Եպիսկոպոսը ստուգութեամբ անուններով կը նշէր այն զաւառներն ու վայրերը ուր Քառասուն զինուորները դրկուած էին, թէ՛ կայսերական բանակային վայրերը իրենց պարտականութեան վրայ, եւ թէ՛ իրենց փախստական ապաստանարանները, լեռներն ու բերդերը, Ուխտանէսի գիտցած յայտնի անուններով եւ աշխարհագրական դիրքով: Քառասուն Մանկունք միշտ միասնական եւ անդրդուելի մնացին իրենց քրիստոնէական հաւատքին մէջ:

Քառասուն Սուրբերու նահա-

տակութեան հետ առնչուած են ինչպէս կը նշէ Ուխտանէս Սերաստիոն (Մալաթիա) բերդաքաղաքը, Գայլախագուղ կոչուած լեռնաշղթան Մանանաղի գաւառին մէջ, ինչպէս նաեւ Տիւթնիք լեռը, «բոլորն ալ կը նկատուէին ապահով վայրեր եւ հեռուոր բերդեր» ինչպէս ինք կը գրէ: Ուխտանէս կ'աւելցնէ վկայելով որ «մինչեւ այսօր գոյութիւն ունին այն վայրերը ուր սուրբերը բնակեցան եւ որոնց անունները քանդակուած կը մնան քարէ սիւներուն վրայ»: Նաեւ «փորագրուած է Յաղթական Խաչը ու անոնց ապաստանած վայրերը որոնք տակաւին կը պաշտուին Եկեղեցիներու եւ հոգեւորականներու գոյութեամբ, ծանօթ որպէս Եկեղեցածոր, ուր իրենց անուններով փորագրուած քարէ սիւները կը պահուին»: Ուխտանէս կուտայ նաեւ «Քաջ Վահանայ» անունով Ալիս գետին մօտ եղող բերդը ուր Քառասունները բնակեցան եւ կամ ապաստան գտան հայածանքներուն պատճառաւ: Յայտնապէս Ուխտանէս տեսած է եւ կարգացած Քառասուններուն անունները այդ սիւներուն վրայ:

Նահատակութեան Թուակաճը

Ուխտանէս երկու յաւելեալ տեղեկութիւններ եւս կը հաղորդէ Քառասուն Մանկանց նահատակութեան առիթով: Առաջինը, Լիկիանոս կայսեր համատարած հալածանքը քրիստոնէաներու հանդէպ, յատկապէս հրահանգելով Քառասուն զինուորներուն, տակաւին անգիտանալով անոնց իսկ քրիստոնէայ դարձի մասին, որ հետապնդեն քրիստոնէայ դարձի եկողները ընդհանրապէս արեւելեան նահանգներուն վրայ:

Համաճարակին Պատճառաւ

Շարունակուած էջ 1-էն

Վարչապետը յայտարարեց՝ խստացուած են արտակարգ դրութեան պայմանները. - «Փողոց դուրս եկած մեր քաղաքացիները պէտք է յստակ բացատրութիւն ունենան, թէ ուր են գնում, եւ այդ բացատրութիւնը պէտք է տեղաւորուի կենսական անհրաժեշտ տրամաբանութեան մէջ: Տեղաշարժի մէջ գտնուող մեր բոլոր քաղաքացիները պէտք է ունենան անձը հաստատող փաստաթուղթ, եւ պարէտաւորուողը կը սահմանի քաղաքացու կողմից ձեւաթուղթ լրացնելու պարտադիր պայման:

«Նշեմ միայն, որ այսօրուանից առնուազն մէկ շաբաթով փակ են բոլոր ճաշարանները եւ սրճարանները, աշխատելու են խանութները, դեղատները, դրամատները, եւ ձիշոք է՝ քաղաքացիները հնարաւորութիւն են ունենալու այցելել խանութ, դեղատուն եւ դրամատներ, բայց եւ ուզում եմ բոլորիդ խնդրել, որ առաւելագոյնս օգտուէք առցանց ծառայութիւններից՝ առցանց գնումներ, առցանց վճարումներ եւ առցանց դրամատնային ծառայութիւններից:

«Միւրեւի հայրենակիցներ, հասկանում եմ, որ շատերը նման ծառայութիւններից օգտուելու փորձ չունեն, բայց սա շատ լաւ առիթ է սովորել ժամանակակից աշխարհին յատուկ արհեստագիտական այս լուծումներին, մանաւանդ որ այդ ծառայութիւնները ձեր կեանքը միանշանակ կը դարձնեն աւելի յարմարաւէտ ոչ միայն համաճարակի պայմաններում, այլեւ դրանից յետոյ:

«Ուզում եմ նաեւ ներողութիւն խնդրել բոլորիցդ այս սահմանափակումների եւ պատճառող անյարմարութիւնների համար: Յոյս ունեմ, սակայն, որ բոլորիդ համար

ակնյայտ է, որ սա արուում է հենց ձեր եւ յատկապէս մեր ազգային գիտակցութեան յենասիւնների՝ մեր ծնողների, տատիկների եւ պապիկների անվտանգութիւնն ապահովելու համար:

«Նշեմ նաեւ, որ հենց այս նպատակով բոլոր այն թոշակաւորները, ովքեր իրենց թոշակները կանխիկ են ստանում, այս ամիս կարիք չեն ունենայ գնալ փոսթային բաժանմունքներ եւ թոշակները կը ստանան առձեռն՝ իրենց բնակարաններում «Հայփոսթ» շրջիկ խմբերի կողմից:

«Նաեւ սահմանուել է, որ բոլոր խանութները, դեղատները, դրամատները առաւօտեան ժամը 10-ից 12-ը կը սպասարկեն միայն 65-ից բարձր տարիք ունեցող քաղաքացիներին: Բոլոր միւս քաղաքացիներին կոչ եմ անում այդ ժամերին խանութներից գնումներ չկատարել:»

Նիկոլ Փաշինեանը նկատած է՝ Արժույթի միջազգային հիմնադրամի արդէն իսկ արձանագրած է, որ 2020 թուականը անկումային պիտի ըլլայ համաշխարհային տնտեսութեան համար. - «Հայաստանի պարագայում կանխատեսումներն այս պահի դրութեամբ դրական են, բայց ակնյայտ է, որ մենք կորցնելու ենք աճի միտումները, որը համատեղ աշխատանքի արդիւնքում ձեւաւորեցինք 2019 թուականին: Բայց ինչպէս ասել եմ նախկինում, այս վիճակը մենք ընկալում ենք ոչ թէ որպէս ողբերգութիւն, այլ որպէս նոր հնարաւորութիւն՝ համաշխարհային տնտեսութեան մէջ Հայաստանի տեղադիրքը փոխելու:»

Նիկոլ Փաշինեանը փոխանցած է նաեւ, որ «Քորոնա» ժահրով վարակուած 4 քաղաքացի առողջացած է, իսկ մեկուսացումէն դուրս եկած է 37 քաղաքացի:

Սուրբ Քառասուն Մանկունք Սերաստիոյ

Շարունակուած էջ 14-էն

րուն մէջ, եւ կայսերական հրահանգով ազդարարեն չյարիւր քրիստոնէութեան, այլպէս «մահապատիժի ենթարկելով զանոնք», հակառակ այն իրողութեան որ այդ տարիներուն Կոստանդանոս Մեծ կայսեր համաձայնագրով կայսրութեան մէջ, ոչ պաշտօնական այլ միայն «թոյլատրեալ» կրօնքներու շարքին քրիստոնէութիւնն ալ արտօնուած էր: Լիկիանոսի հրահանգին համաձայն, ինչպէս Ուլտանէս կրկնակի կը յիշէ, արեւելեան նահանգներ քանիցս ուղարկած իր զօրավարին միջոցաւ հարկ էր գործադրել զայն, մինչեւ այն ատեն երբ Քառասուններուն միակամ քրիստոնէութեան դարձը յայտնի դառնալով, յիշեալ զօրավարը կը հաղորդէր զայն Լիկիանոսի:

Ուլտանէս կ'աւելցնէ թէ «Լիկիանոս կը հրահանգէր նոյն զօրավարին եւ Սերաստիոյ քաղաքային դատաւորին փնտռել Քառասուն գինուորներուն թաքստոցները, գտնել գիրքն ու պատժել, «բացի եթէ ետ դառնային իրենց որոշումէն եւ կուսպաշտութեան հետեւէին»: Ինչպէս յիշուեցաւ իրենց պատասպարաններէն, բերդերէն ու լեռնակողմ քաղաքներէն հաւաքելով Քառասուն վկաները պիտի նահատակուէին սառած լիճին մէջ:

Այս բոլորը եպիսկոպոսը կ'ընդգրկէ իր յիշեալ գիրքին մէջ որ իմ կարծիքով պատմութեան մէջ կը հանդիսանայ գործի վրայ եղող առաջնակարգ անձի մը վկայութիւնները, չնայած հարիւրաւոր տարիներու հեռուորութիւնը: Ուլտանէս նաեւ տարեկան յիշատակութեան ճշգրիտ թուականը կը հրահանգէ որպէս թեմակալ ճշգրիտ Արեգ ամսու 15-րդ օրը երբ գտան գիրքնք, «գոր պատահամբ է՛ք որ կ'արձանագրենք այլ ստուգուած բանասէրներու կողմէ», ինչպէս ինք կ'ըսէ:

Փակման Աղօթքը
Ուխտանէս եպիսկոպոս իր Ա. Գիրքի 61-րդ գլուխը կը փակէ հետեւեալ աղօթքով:
»Ո՛վ է ան որ կրնայ հասկնալ այն պատիւը որ միայն իրենց կը պատկանի, որովհետեւ ոչ թէ մէկ լեզու, նոյնիսկ քառասուն լեզուներ բաւական պիտի չըլլան օրհնելու եւ պանծացնելու այս մարդոց անհամար երաշխիքն ու առաքինութիւնները: Մեր հիացումը մէկ կամ երկու անձերու յատուկ չէ, նոյնիսկ միասնաբար տասը հոգիներու, այլ քառասուն մարդոց որոնք իրարու միացան եւ որպէս մէկ եւ միացեալ հոգի նահատակուեցան Քրիստոսի փառքին համար, որուն վայել է փառք յաւիտեանս: Ամէն«:

Թոքիոյ Ողիմպիական Խաղերը

Շարունակուած էջ 1-էն

առկայ իրավիճակը: Բոլոր կողմերը մարզիկներու եւ հանդիսատեսի համար ապահով եւ անվտանգ միջավայր կը ցանկան», - նշած է ձափոնի վարչապետը:

Միջազգային ողիմպիական կոմիտէն յայտնած է, որ խաղերը տեղի կ'ունենան ոչ ուշ, քան 2021 թուականի ամառը, բայց կը կոչուին Թոքիոյ ողիմպիատա 2020:

«Առաջնորդները համաձայնեցան, որ Թոքիոյ ողիմպիական խաղերը աշխարհի համար կրնան յոյսի փարոս դառնալ այս անհանգիստ ժամանակներուն, եւ որ ողիմպիական կրակը կրնայ լոյս դառնալ փապուղիի վերջաւորութեան, ուր ներկայիս յայտնուած է աշխարհը: Ուստի որոշուած է, որ ողիմպիական կրակը պիտի մնայ ձափոն», - նշուած է Միջազգային ողիմպիական կոմիտէի յայտարարութեան մէջ:

Աւանդութեան համաձայն՝ Աթէնքէն՝ ողիմպիական մրցումներու բնօրրանը համարուող Յունաստանէն, ողիմպիական կրակը յատուկ օդանաւով բերուած է ձափոն:

Չորս տարին անգամ մը կայացող Ողիմպիական Խաղերը այս տարի Թոքիո պէտք է տեղի ունենային 24 Յուլիս - 9 Օգոստոսի միջեւ, բայց աշխարհով մէկ «Քորոնա» ժահրի տարածմանը զուգահեռ, զայն յետաձգելու կոչեր կը հնչէին: Անցեալ կիրակի Միջազգային ողիմպիական կոմիտէի նիս-

տին, վերջնական որոշում չէր կայացած, երէկ ձափոնի վարչապետի յայտարարութեան մէջ եւս որոշ չափով անորոշութիւն կար, մանաւանդ որ ան չէր բացատրած Ողիմպիական խաղերը կը յետաձգուին «Քորոնա» ժահրի պատճառով:

Ամբողջ աշխարհի մէջ աւելի քան 17 հազար մարդու կեանք խլած այս ժահրը խառնած է նաեւ եւրոպական ֆութպոլային ախոյեանութիւնները:

ՌիեՏԱ-ն (Եւրոպայի ֆութպոլի ֆետերասիոնը) պաշտօնապէս յայտարարեց, որ «Քորոնա» ժահրի պատճառով անորոշ ժամկէտով կը յետաձգէ «Չեմփիընզ լիգ»-ի եզրափակիչ հանդիպումը: Եւրոպայի ֆութպոլային ուժեղագոյն ակումբներու եզրափակիչը այս տարի նախատեսուած էր կայանալ 30 մայիսին Պոլսոյ Աթաթուրքի անուան մարզադաշտը:

Յետաձգուած են նաեւ Եւրոպայի լիգայի եւ կանանց «Չեմփիընզ լիգ»-ի եզրափակիչ խաղերը: Անոնք նոյնպէս նախատեսուած էին կայացնել գալիք մայիսին: Եւրոպական ֆութպոլային ախոյեանութիւններու եզրափակիչներու յետաձգումը սպասելի էր, քանի որ դադրեցուած էին եզրափակիչ հասնելու խաղերը, յաղթողները որոշուած չէին, որպէսզի վերջաւորութեան յաղթէին ուժեղագոյն 2 ակումբները: Դեռ որոշուած չեն խաղերը վերականգնելու ժամկէտները:


Ընտրութիւններ Մէ՞կ Փուլով, Թ՞է Երկու

Շարունակուած էջ 2-էն

րին ընտրական գուռածի կողմնորոշման հակառակ փոփոխութիւններ, ըստ երեւոյթին, չեն լինի: Բայց լարուածութիւնը չի բացառուում: Կան խմբեր, որոնք ակնյայտօրէն ներդրուած են եւ կարող են դիմել արկածախնդրութիւնների: Արտաքի՞ն ազդեցութեան «գործակալներ» են նրանք, թէ՛ նախագահի թեկնածուներից մէկի՝ առաջմ պարզ չէ, բայց Մարտի 22-ից սկսած՝ որոշ շրջանակներ հանրութեանը հետեւողականօրէն ներշնչում են քուէարկութեան երկրորդ փուլի անխուսափելիութիւնը: Տպաւորութիւն կայ, որ դա արուում է նախկին վարչապետ Արայիկ Յարութիւնեանի ձայները փոշիացնելու նպատակով: Նախագահի միւս թեկնածուները, որ հանրային գոնէ նուազագոյն աջակցութիւն ունեն,

շարունակում են նախընտրական հանդիպումները: Ըստ երեւոյթին, նրանք նոյնպէս երկրորդ փուլի վրայ են խաղադրույք դրել: Այդ իրավիճակում առաջատարների հետ քաղաքական պայմանաւորուածութիւնն, անկասկած, աւելի բարձր գին կ'ունենայ: Մանաւանդ որ ընտրուած նախագահը պէտք է լուծի նաեւ ԱԺ քաղաքական մեծամասնութեան հարցը, ինչի հնարաւորութիւն խորհրդարանական ընտրութիւնները չեն տալիս՝ առանձին վերցրած ոչ մի կուսակցութիւն չունի այդ ռեսուրսը:

Ինչ զարգացումներ կարող են տեղի ունենալ առաջիկայ օրերին: Առաջմ չի բացառուում ոչ առաջին փուլով աւարտը, ոչ երկրորդ փուլի հաւանականութիւնը: Մօտակայ մէկ-երկու օրերին, թերեւս, պատկերն աւելի կը յստակուի:
«ՀՐԱՊԱՐԱԿ»



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com



Դուք արժանի էք հաշուընելու



Մարդահամարը տեղի պիտի ունենայ այս Գարնան

Մարտի կեսին սկսեալ, կրնանք պատասխանել ինն պարզ հարցումներու,
որպէսզի կարենանք օգնել տեղեկացնելու, թէ մեր համայնքներուն
մէջ, յաջորդ տարի դրամը ինչպէ՛ս պետք է ծախսուի:
Բոլոր հարցումները պաշտպանուած են եւ գաղտնի:

Իմացէք աւելին՝ այցելելով CaliforniaCensus.org կայքը: